№ 27 ՈՒՐԲԱԹ, 5 ՓԵՏՐՎԱՐԻ

ՌՈՒՍՍԱՏԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . . 10 ռուբ.
Կէս տարին . . . . . 6 ռուբ.
Ամսական . . . . . 1 ռուբ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . . 12 ռուբ.
Կէս տարին . . . . . 7 ռուբ.

Բաժանորդագրութիւնը ընդունւում է իւրաքանչիւր ամսի սկզբից, և պիտի վերջանայ անպատճառ յետագայ որեւէ ամսի վերջին.

Փեստրարի մակից մինչեւ տարեայ վերջը արժէ 10 ռուբլի.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 20 ԿՈՊԵԿ (կարելի է մարկաներով) և հին հասցէն, առանց որի դիմումները կը մնան անհետեւանք.

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 1916 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀՈՐԻԶՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՈՒՐԲԱԹ, 5 ՓԵՏՐՎԱՐԻ № 27

ԱՌԱՆՁԻՆ №-Ը ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՎ.—1-ին երեսի վրայ տողն (պետական) 10 կոպ., Կովկասից դուրս՝ 20 կոպ., 4 րդ երես 5 կոպ., Կովկասից դուրս՝ 10 կոպ.։

ԱՊԱՌԻԿ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Խմբագրութիւնը բաց է 9—3 ժամ., գրասենեակը 9—2 ժ. ցերեկ. և 6—8 ժ. երեկ.։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԿՄԲԱԳՐԻ ՄՕՏ՝ ժ. 2-ից մինչ 3-ը։

Իր հասցէն՝ Тифлисъ, Редакція Газеты „Оризонъ". Солодавская ул., № 6, кв. 1, Телеф. № 15—57.

Адресъ Tiflis (Russie, Caucase), Redaction „Horizon".

ԲԱՑԻԱԾ Է 1916 ԹՎԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ՀՈՐԻԶՈՆ"

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԻՆՆ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

12 և 11 ամիս	10 և 9 ամիս	8 ամ.	7 ամ.	6 ամ.	5 ամ.	4 ամ.	3 ամ.	2 ամ.	1 ամ.
10 ռուբլի	9 ռուբլի	8 ռբ.	7 ռբ.	6 ռբ.	5 ռբ.	4 ռբ.	3 ռբ.	2 ռբ.	1 ռբ.

Արտասահման տարեկան 12 ռ., կէս տարին՝ 7 ռուբլի

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Կարելի է վճարել նաև մաս-մաս. տարեայ սկզբին 4 ռուբ., մայիսի 1-ին 4 ռուբ., սեպտեմբ. 1-ին 2 ռուբլի։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպ. (կարելի է մարկաներով) և հին հասցէն, առանց որի դիմումները կը մնան անհետեւանք։

Ցատուկ Թղթակիցներ կունենանք Պետրոգրադում, Մոսկայում, Նոր-Նախիջեւանում, Թէհրանում, Թաւրիզում, Վանում, Եւրոպական և Ամերիկական խոշոր կենտրոններում և Կովկասի բոլոր անկիւններում։

ՕՐԻԱՑ ԿԱՐԵՒՈՐ ԱՆՑՔԵՐԸ

Ռուսաց արևմտեան ճակատում տեղի են ունենում օդային հետախուզութիւններ։

Կովկասեան ճակատում, ծովամերձ շրջանում, Թիւրքերը դուրս քշւելով իրենց դիրքերից, յետ են շպրտուած Վիցէ-սու գետի այն կողմը—Դիէ-Բօյնուի մարակոցներում։ Վերցուած է 70 թնդանօթ։—Էրզրումի հարաւային մասն այրւում է։—Խնուսի շրջանում յառաջխաղացումը շարունակւում է։

Բալկաններում դաշնակիցները շարունակում են զօրքեր, ռազմամթերք և ուտեստի պաշարեղէն ափ հանել։—Ցունական 7000 հեծեալներ և մի հետեակ զունդ Սալոնիկից ճանապարհւել են դէպի Լարիսա։

ԲԺԻՇԿ

Բ. Գ. ՆԱՐԻՄԱՆՈՎ

Վեներական, կաւի, սիֆիլիս և նրանց հետեւանքներ։ Բուժումն «606» և «914» պրեպարատներով։ Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր երեկ. ժ. 5½-ից մինչև 8-ը։ Միքայէլեան փող., № 33.
38 100—20

ԲԺԻՇԿ

Շուշանիկ Նաբաթեան

Ընդունում է հիւանդներ կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան մասնագէտ։ Ընդունելութիւնը ամեն օր ցերեկւայ 1—2 ժ. երեկոյեան 4—6 ժամը։

Սոլոլակ, Ռուիշչևակայա փող. № 1.
705 Հեռախօս 10—58։ 100—63

ՏՊԱՐԱՆ

„ՄԱՄՈՒԼ"

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ

Օտար քաղաքներից պատուէրները կատարւում են կանխավճար ստացուց յետոյ։

Тифлисъ, Типографія „Мамулъ", Лорисъ-Меликовская, 22.

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ-ԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Շաբաթ, փետրուարի 6-ին

Հայ դրամա-օպերետային առաջին գերազանական ընկերակցութիւնը դարձեալ մէկ—51-րդ անգամ կը ներկայացնէ ամեն տեղ մեծ ընդունելութիւն գտած ԱՍԻԱԿԱՆ ՈՒԻԱՆ ՕԳԵՐՆՏ

ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ

4 գործ. հեղ. Ուզէիր-Բէգ Հաջիբէգովի, թարգ. Ս. Կարապետեանի

Արևելեան երաժշտասումբ թարգմանչի ղեկավարութեամբ

Սկիզբը հիշ. 8¼ ժամին. երեկոյեան

Տեղերի գները պետական նոր տուրքի հետ միասին 2 ռ. 20 ից մինչև 60 կ.

Մուտքի համար առանձին չի վճարւում

Տոմսակները վաճառւում են՝ Երևանեան հրապարակ Արզարեանի և Աղաջանեանի գրամագիրքի խանութում, իսկ գիշերները Արտիստական դահլիճի մուտքի մօտ։

Խմբի լիազօրներ՝
Ղազարեան, Կարապետեան
եւ Փիրումեան

135 2—1

Փեփրոնէ Խոջամիրեանը երեխաներով և թոռներով յայտնում է

ԽԱՉԱՏՈՒՐ ԽՈՋԱՄԻՐԵԱՆԻ

մահը։ Ամփոփը շաբաթ, փետրուարի 6-ին, երեկոյեան ժ. 7-ին բնակարանում (Կլասիչեսկի, 14)։ Ցուզարկաւորութիւնը կիրակի, փետրուարի 7-ին, առ. ժ. 10-ին դէպի Քամոյեան եկեղեցին։ Թաղուելու Խոջիվանքի գերեզմանատունը։ 2—1
134

Էլեֆտրո- „ԼԻՐԱ" Թատրոն

2, 3, 4 և 5-ին փետրուարի, կը ցուցադրւի մենաշնորհուած սենսացիոն նկար, միմիայն մեր թատրոնում

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԱԻԱՏԻ, ԹԱԳԱՒՈՐԻ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ

Մեծ ռազմական նկար 5 մեծ մասերից, հրատարակութիւն Սկոբելեւեան կոմիտէի, որ գտնւում է

Նորին Կայսերական Բարձրութեան ներքոյ

582 0—116

Մանրամասնութիւնները աֆիշայով և ծրագրով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նորին Կայսր. Բարձրութիւն Տէր Փոխարքայի կարգադրութեան համաձայն թոյլատրուած է բոլոր այն փախստականներին, որոնք այժմ գտնւում են Թիֆլիսում և կարօտ են պետական օգնութեան՝ ՇԱԼ քաղաքիս մէջ ժամանակաւորապէս, մինչև այս տարեայ ապրիլ 1-ը և ստանալ նոյն ժամանակւայ համար պետական նպաստ, թէ ուտելիքի և թէ բնակարանի համար։

Այս նպաստը ստանալու են միայն նրանք, որոնք աշխատանք չունին, կամ ընդունակ չեն աշխատանքի։

Ուստի քաղաքային յանձնաժողովը հրաւիրում է բոլոր փախստականներին փետր. 5-ից սկսեալ, առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը, դիմել Տ. Նազարեանի հաշարան-ապաստանարանը (Մուշտայիդի մօտ, Ակարիումի այգին)։ Այդտեղ յատուկ պաշտօնեաներ կը ցուցակագրեն փախստականներին, և ամեն մի ցուցակագրւող ընտանիք կամ անձ կը ստանայ առանձին տետրակ, որով և յետոյ կը ստանայ իրեն յատկացրած նպաստը։

Նախագահ Քաղաքային Փախստականական Յանձնաժողովի՝
Հ. Առաքելեան

893 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃ

Շաբաթ, փետրուարի 6-ին 1916 թ.

ՊՈԼՍԱՀԱՅ ՅԱՅՏՆԻ ԳՐԱԳԻՏՈՒՀԻ ՏԻԿ. ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԸ

կը դասախօսէ

„ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ"

Տեղերի գները 2 ռուբլուց մինչև 50 կոպ.

Մուտքի և աշակերտական տոմսը—դասախօսութեան օրը 30 կոպ.

Սկիզբն է 8½ ժ. երեկոյեան.

Նախօրօք տոմսերը կարելի է ստանալ «Մի բաժակ թէյ»-ի դահլիճում, ս. Մարգարեանի, Գոլովինսկի պրոսպ. և Ցատուբեանի խանութում, Դվորցով-յա, իսկ դասախօսութեան օրը ժողովարանի դահլիճում։ 133 3—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Ուրբաթ, փետրուարի 5-ին

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Ուսուցիչների եւ Ուսուցչուհիների Ընկ. օգտին

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

I

ՀԱԶԱՐ ՈՒ ՄԷԿ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Արևելեան կոմեդիա 1 արար., Ամբայի, թարգ. Ստամբոլցեանի։

II

ՁԱՒԵՇՏ Մասնակցութեամբ Ն. Աղբալեանի, նախկին Կայս. թատ. երգիչ Բ. Ամիրջանի, տ.տ. Սիրանոյշի, Սեւումեանի, ազատ գեղարուեստագէտ Ա. Տէր-Ղեոնդեանի և Ս. Քափանակեանի։

III

ԶՈՔԱՆՉԸ ԵԿԱՒ ՇՓՈԹՄՈՒՆՔ ԸՆԿԱՒ

Կոմեդիա 1 արար., Սոկոլովի, թարգ. Վ. Մանուէլեանի

Գիշատիչներում մասնակցում են—տ.տ. Զաբէլ, Ժասմէն, Սեւումեան, պ.պ. Աբելեան, Աւետեան, Միրզոյեան, Սեւումեան և ուրիշներ։

Վերջը՝ ՀԱՄԵՐԳԱՑԻՆ ԲԱԺԻՆ, Գայիանեան զարոցի աշակերտական երգեցիկ խումբը Ա. Մանուկեանի ղեկավարութեամբ կերգէ ժողովրդական երգեր։

ՍԿԻԶԲԸ 8 Ժ. ԵՐԵԿ. Տեղերի գները 4 ռ.-ից մինչև 1 ռ.

Ղեկավարութեամբ՝ Սեւումեան 894 1—1 Մուտքի տոմսերը 60 կ.

ԲԺԻՇԿ

ՅՈՎ. ԼԱԶԱՐԵԱՆՑ

Նախկին օրդինատոր Օդեսսայի համալսարանի կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան կլինիկայի։

Մասնագէտ կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան։ Ընդունում է հիւանդներին բացի կիրակիից ամեն օր, առ. ժ. 1—3 և երեկ. ժ. 5—7։ Հասցէ՝ Саперная ул., № 35, հեռախօս № 16—83. 1038 50—23

ՌՈՒԲԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ.

ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւնը, առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱՒԱՏԻ և սրտի, բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՒՆՆԵՐՈՎ, թոքախտ, սրտի և ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարները լուսաւորած ՇԱՆԹԱՑԻՆ ՐԵՆՏԳԵՆի հաւագայթներով։ Ամեն օր 9—1 և 5—7 ժ., կիրակի օրերը 9—12-ը։ Բեհբուտովսկայա № 23, հեռ. 7—94։
123 25—2

ԷՐԶՐՈՒՄԻ ՊԱՏԵՐԻ ՏԱԿ

Ռուսական բանակը թնդանօթային ուժեղ նախապատրաստութիւնից յետոյ գրոհով գրաւեց Էրզրումը։ Թիւրքական ամենաուժեղ հաստատած բերդի ամրութիւնները կարճ ժամանակում խորտակւեցին։

«Հորիզոն»-ի էջերում շատ է խօսւել Էրզրումի գրաւման անագին նշանակութեան մասին։ Ռազմագիտական խոշոր առաւելութիւնների հետ, մեծ է մանաւանդ նրա քաղաքական կարևորութիւնը։ Արևելքի, ամբողջ մահմեդական աշխարհի ուշադրութիւնն էր գեհուած, Գալիցից յետոյ, դէպի այդ բերդաքաղաքը՝ իրրև գլխաւորական յենարանը ապագայ հատիսլամական կայսրութեան, հիւսիսի քրիստոնեայ հսկայի դէմ։

Երբ 1914 ի դեկտեմբերին Մարիդամիշ-Կարաուրգան ուղղութեան վրայ Թիւրքերի պարտութիւնից յետոյ, ռուսական գլխ. հրամանատարութիւնը հրաժարւեց զարգացնել գործողութիւնները, երբ դեռ նոյն տակտիկային էր հետևում ռուսական բանակն ամեն անգամ, որ թշնամու առաջխաղացութիւնն արգիլելու, կամ պարզ հետախուզութեան նպատակով առաջանում էր և նահանջում՝ առանց Էրզրումի դէմ անմիջական գործողութիւնների ձեռնարկելու, այդ երևոյթն Արևելքում բացատրւում էր իրրև ապացոյց դաշնակիցների տկարութեան և Թիւրքգերմանների անընկճելիութեան։ Եւ, ապաւորութիւններով ազդող Արևելքում, արդէն հողը պատրաստ էր Թիւրքա-գերման պրոպագանդի համար։

Այսօր այլևս կասկած չկայ, որ եթէ մեր բանակը մի տարի առաջ ձեռնարկէր Էրզրումի դէմ վճռական գործողութիւնների, դաշնակիցները զերծ կը մնային Աւղանստան - Գարսկաստանի արշաւանքներից, գուցէ և տաճկական պատերազմը վաղուց արդէն լիկվիդացիայի կենթարկուէր, և կարիք չէր մնար այն հսկայական զոհերի, որ տուեց մանաւանդ Հայաստանը...

Ռուս բանակի կողմից Մեծ - Հայքի բարձրաւանդակի գրաւման նախօրեակին ենք գտնւում։ Ռուսական ջախջախիչ հարուածն երկրի սրտին՝ սպառնում է ճակատագրական լինել Թիւրքիայի համար։ Էրզրումից են մեկնում բոլոր ճանապարհները դէպի Ասիպատական-Գարսկաստան, Միջագետք և Թիւրքիայի յետագայ բոլոր ռազմադաշտերը. և այն ուժեղ տեմպը, որով առաջ են տարւում ռուսական գործողութիւնները, յոյս է տալիս, որ արշաւանքը կը հասցուի իր տրամաբանական վախճանին մինչև որ Թշնամին այլևս հնարաւորութիւն չունենայ դիմադրելու։

Վճռականութիւնը, մանաւանդ Արևելքում, սկսած գործի ամենագլխաւոր պայմանն է։ Ռուսական նեբկայ գրոհը Էրզրումի դիրքերի վրայ անախընթաց է Թիւրքական պատմութեան մէջ։ Գեն. Իւդենիչի հարուածը շատ աւելի արագ, ուժեղ և ջախջախիչ է, քան Պասկեվիչինը 1828-ին։ Մնում է միայն չթուլացնել թափը, առաջանալ նոյն ուժգնութեամբ, և համեմատաբար կարճ միջոցում կընկճի Թիւրքական դիմադրութիւնը, կը փլւին գերմանս Թիւրքերի յախուռն ու ցնորական ծրագիրները։ Ե. Գ.

ՇՏԱՊԵՆՔ

Էրզրումի գրաւումով ամբողջ հայկական նահանգները ալ ևս ազատ ապարէզ կը լինին ռուսական յաղթական բանակի առաջ։ Վերջինը կը շարունակէ իր յառաջխաղացումը դէպի Հայաստանի խորքերը,—չենք գիտեր, սակայն ինչ որ լինի, կասկածից դուրս է, որ շատ շուտով, թէ Էրզրումէն և թէ մօտ վայրերէն փախստականներու նոր հոսանք մը պիտի վերսկսի դէպի Կովկաս։

Պատրաստ ենք ընդունելու ու խնամելու համար մեր թշուառ հայրենակիցները, որոնք մի տարիից աւել է, որ դժոխքի մէջ կը տապկւին...

Վերջին՝ Խնուսի օբլնակը մեր աչքի առջևն է. հարիւրաւոր ու գուցէ աւելի փախստականներ շտապեցին դէպի Ալաշկերտի Ղարաքիլիսէն, ով դանուեցաւ այնտեղ այդ ուրբականներու մերկութիւնը ծածկելու ու մի կտոր հաց տալու համար. եթէ չլինէր Գեղ. ընկ.-ման հրահանգիչը, այդ խեղճերը բոլորովին անտէր պիտի մնային։

Ի՞նչ պէտք է անենք մենք յառաջիկային կրկին անպատրաստի չգտնուելու համար նոր կարիքներու առաջ, ամենամեծ պարտականութիւնը կը ծանրանայ մեր բոլոր գաղթականական ու նպաստամատոյց մարմիններու վրայ։

Ես կառաջարկեմ, որ հենց այժմից յիշեալ ընկերութիւնները լիազօրներ ունենան զանազան կարեւոր ֆրոնտներու վրայ. այդ լիազօրները յառաջանալով բանակի հետ իսկ, կը կարենան արդեն օգնութեան գործը տեղւոյն վրայ։

Բոլոր պատասխանատուութիւն կիյնայ նաև Կովկասում ապրող տաճկահայերի վրայ. այսօր մեծ քանակութեամբ Էրզրումցիներ, Երզնկացիներ, Խոտորջուրցիներ, Տրապիզոնցիներ և այլն կը գտնուին Կովկաս ու Սև-ծովի շրջանները. ինչ են արել մինչև այսօր նրանք իրենց դժբաղդ հայրենակիցներու օգտին,—գրեթէ ոչինչ և կամ շատ չնչին բան. սակայն այսօր անտարբեր մնալը կամ դանդաղ շարժուիլը պարզապէս ոճիր է։

Յոյսերնիս չդնենք միմիայն զանազան մարմիններու ու կոմիտէներու վրայ. խօսքի, քննադատութեան, խրճթանքի ժամանակը չէ. գործի և առաջ գործի վայրկեանն է. շարժուինք...

Ս. Տիրատուրեան

ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՑ ՄԷԿԸ

Հ. ԿԱՐԱՊԵՏ ՏԷՐ-ՍԱՀԱԿԵԱՆ

I

Դժբախտաբար չարդարացաւ իմ յոյսը, որ յայտնել էի «Հորիզոնի» էջերում, Նորայր Բիւզանդացուն նուիրած յիշողութիւններս մէջ։ Ձգտում է, որ Տրապիզոնի բարբարոսական կատարածների մէջ նահատակւել է և Հ. Կարապետ Տէր-Սահակեանը։

Մանրամասնութիւններ չգիտեմ ես, բայց ինչ պիտի աւելացնեն նրանք խողխողման փաստի վրայ։ Երևակայում եմ զարէցղարէ, բոլոր լիզուներով նզովւած Թիւրքական եաթաղանի տակ այդ երիտասարդ և տաղանդաւոր Մխիթարեանին, և անծայր կսկիծն է ծանրանում հոգուս վրայ։ Բթացել են մեր ջղերը այս անօրինակ ժամանակի սարսափներից։ Բայց այս դրութեան մէջ էլ այսպիսի մի մահ չէ կարող սուր չծակել սիրտը։ Որովհետև նա էլ մէկն էր ընտրեալներից, մէկն այն սակաւներից, որոնց հայ երկիրը ժպիտով ու կարմիր յոյսերով էր սնուցել իր դժբախտութեան մէջ, որպէս զի նրանք դառնան ուղեցոյց լոյսեր խաւարի մէջ և նրանցով զարդարւի հայ կեանքը։

Ամեն անգամ, երբ մոնգոլական վայրենութիւնը փոթորկում է հայոց դաշտերը, քանի քանիներն են հայ կեանքի ծաղիկներից խեղդւում արեան ճահիճների մէջ։ Այս անգամ մանաւանդ շատ են առաջին կարգում կանգնած այդ նահատակները։ Ամայացու-

Թիւրքաց Հայաստանը ժանուանդ իրրև մաւոր անդաստան, իրրև մտքի և զգացմունքի ծաղկոց։ Ո՞ւր է Գրիգոր Զօհրապը և ուր նրա տասնեակ ընկերները, որոնք Թիւրքահայ երկնակամարի փայլուն աստղերն էին երեկ։ Հայ նահատակութիւնը բազմաթիւ վրէժխնդիր հերոսների հետ երկնեց և անմահ տաղանդներ, որոնց բերանը գրեց իր զուլումի, իր արեան աղաղակները սարսռեցնող և հրահրող երգը։ Սիամանթօ և Դանիէլ Վարուժան—ուր են նրանք։ Անմահ են նրանք համաշխարհային գրականութեան մէջ։ Միայն հայը կարող էր երկնել այդպիսի բանաստեղծութիւն, որովհետև միայն հայն է, որ համատարած կոտորածների է ժամանած դարերով։ Ո՞ւր են հայերի ճակատագրի այդ կրակոտ երգիչները։—Զոհեցին և նրանք, զոհեցին հենց այն ոճիրին, որի կրակոտ երգիչներն էին։

Եւ ցնցում է, սուր կսկիծով է ցընցում տաղանդի մահը՝ մահերով մինչև անկարելիութիւնը կշտացած մեր ժամանակում։

Հ. Կարապետը դեռ չէր կարողացել գրական հռչակ վաստակել իր համար։ Դեռ շատ էր երիտասարդ, բայց նրան ճանաչողի համար պարզ էր որ գրական հռչակը սպասում է նրան առջևում։

II

Վանական գործունէութեան և հայ գրականութեան ասպարէզում նա երևան է գալիս 1900-ական թուականների սկզբից։ «Բազմավէպ» ամսագրի խմբագիր էր 1908-ին, երբ ես ծանօթացայ նրա հետ Վենետիկում։ Աշխոյժ, կենսուրախ մի բնաւորութիւն, նա այդ միջոցին արդէն շատ լաւ շեշտուած մի դէմք էր երիտասարդ Մխիթարեանների և առհասարակ ս. Ղազարի շրջանում։ Համարեա դեռ պատանի, կարծեմ երեսուն տարեկան էլ չդառած, նա ինձ հիացնում էր իր այն բազմակողմանի և ընդարձակ ծանօթութիւններով, որ ունէր մեր հին գրականութեան և կեանքի հարցերի մէջ... Եւ յաճախ ինքս ինձ հարցնում էի՝ Որբ է կարդացել այդքան բան, ուսումնասիրել, հիմնաւորապէս իւրացրել այդքան նիւթեր։

Ինձ համար նա Մխիթարեան մեծ աշխատասիրութեան մի կենդանի օրինակն էր և նրան նայելով ես ժամանք հասկանում էի, թէ ինչպէս են մի ժամանակ այս մեծագործ վանքում կերտուել Զամչեանի, Աւետիքեանի, Բագրատունու, Ալիշանի հատորները... Բաւական չհամարելով վանքի հարուստ գրադարանը, նա երկար պրպտումներ արել էր ս. Մարկոսի հոյակապ հին ժամանադարանի մէջ և կարելի է ասել թէ գիտէր այդտեղ պահուող համարեա ամեն մի տող, որ խօսում է հայերի մասին...

Եւրոպայում ես որոնում էի եւրոպական այնպիսի աղբիւրներ, որոնք լուսաբանէին մեր նոր պատմութեան էջերը... Վիեննայում Հ. Ակինեանն էջերը... Վիեննայում Հ. Ակինեանն էր, որ մեծապէս ինձ նպաստեց այս հարցի մէջ, իսկ Վենետիկում անմահ առաջնորդ հանդիսացաւ Հ. Կարապետը։ Աշխատանքից հրաժարել նա չգիտէր և 10 օրայ ընթացքում մէկ էլ օրոնումներ արաւ ս. Մարկոսի մատենադարանում և թարգմանեց ինձ համար մի քանի հաղուագիւտ նիւթեր, հանուած հին ճանապարհորդութիւններից։ Այսօր էլ մտաս են Հ. Կարապետի ձեռքով գրուած տետրակները։ Արդեօք ո՞ւր աշխատեցրի ես նրան, թէ ինձ իսկ որ պիտի երբ և իցէ յաջողուի լոյս հանել այս բոլոր աղբիւրների վրայ հիմնուած աշխատութիւնս։

III

Այսքան լաւածանօթութեամբ բեռնաւորուած երիտասարդ մտքին տուած էր մի բեղմնաւոր և վաւերական գրիչ։ Բազմաթիւ են նրա յօդուածները «Բազմավէպի» մէջ, բազմաթիւ են նրա արծարծած հարցերը և խորաթափանց ու առողջադատ է նրա քննական հայեացքը։ Ամենամեծ ծառայութիւնը, որ մատուցել է Հ. Կարապետը հայ պատմական գիտութեան դեռ իր վաղ երիտասարդութեան օրերում, այն է որ նա առաջինը, դեռ պ. Ադոնցի գեղեցիկ գործից էլ առաջ, լուրջ ուշադրութիւն դարձրեց հայ բիւզանդագիտութեան վրայ։

Հայոց պատմութեան պակասաւոր մի կողմն էլ այն է, որ նա համարեա միմիայն Պարսկական Հայաստանն է նկատի առնում, միանգամայն մոռանալով այն ընդարձակ մասը, որ յուսալով բաժինն էր կազմում։ Այստեղ, ճիշտ է, ազգային կեանքը ճնշած ու ամուլ էր, բայց հայ մարդը գործելու ահագին ասպարէզ մի մէջ։ Գլխաւորապէս հայկան կեանքի մէջ։ Գլխաւորապէս Հայաստանի այս մասից էին նաև բազմաթիւ մարդիկ, որոնք նշանաւոր հանդիսացան բիւզանդական ծառայութեան դիսացան բիւզանդական ծառայութեան մէջ։ Հայ կայսրների մի ամբողջ դինաստիա բազմեց Բիւզանդիոնի գահի վրայ, եղան մի շարք հայ կայսրուհիներ, հայ զօրավարներ, հայ մատենագիրներ... Նրանք ամբողջովին հայ պատմութեան չեն պատկանում, բայց հայի մարդկային կեանքն ու ընդունակութիւններն են վեր հանում։ Հայի բնաւորութեան ամբողջութիւնն ստանալու համար պէտք է դուրս գալ հայրենիքի սահմաններից, տեսնել հայկական գաղութները։ Այդտեղ մեր ազգին կը ներկայանայ Մակեդոնական կոչուած, բայց զուտ հայ ծագում ունեցող կայսրների հարստութիւնը կ. Պոլսում, մեծ վէզիրների մի ամբողջ հայկական դինաստիա Եգիպտոսում, Նուբար փաշայից շատ առաջ, Ֆաթմայեան խալիֆների ժամանակ կամ մի հայ զօրավար, որ 18-դ դարում հրամանատար էր Հնդկաստանում, ռաջաների զօրքերի վրայ և այլն և այլն։

Ահա հային այս տեսակ լայն հորիզոններում ներկայացնելու համար էր, որ Հ. Կարապետը հրատարակեց «Հայ Կայսերք Բիւզանդիոնի» իր աշխատութիւնը, երկու փոքրագիր հատոր, տպուած 1905-ին։ Երիտասարդ հեղինակը գրում էր շատ պարզ ու թեթև, հասկանալի, գեղարուեստական ոճով, ուստի այդ գործը, որի մէջ գրուած են 12 կայսրների և 6 կայսրուհիների կենսագրութիւնները, մեծ հետաքրքրութեամբ կը կարդայ և ոչ-մասնագէտը։ Այդ ոճը, ի հարկէ, չէ խանգարում որ աշխատութիւնը լինի միանգամայն գիտական։ Ցաւելուածները ցոյց են տալիս, թէ որքան բարեխղճութեամբ է աշխատել հեղինակը։

1908-ին Հ. Կարապետը ձեռնարկել էր մի ուրիշ վերին ասպիճանի հետաքրքրական գործի—«Հայերը Բիւզանդական գրականութեան մէջ»։ Մի քանի կտորներ տպեցին «Բազմավէպի» մէջ։ Բայց թէ վերջացաւ ամբողջ աշխատութիւնը—չգիտեմ։

IV

Հ. Կարապետը, եթէ չեմ սխալուում, Մուշի դաշտից էր։ Մանանայի հայրենիքն է նա, իր արգասաւորութեամբ և գեղեցկութեամբ օրհնուած մի երկիր։ Բայց Թիւրքական զժոխքի մէջ տապակուող Հայաստանի ոչ մի կողմն էլ դժբախտ չէ նրա չափ։ Քրդական և Թիւրքական բռնութիւնների և հարստահարութիւնների կլասսիք հայրենիք, ուր Մուսա-բէյեր են ծնուում մի ամբողջ ժողովուրդ մշտապէս լաց ու սուգի մէջ պահելու համար։

Երբ ես Վենետիկ էի, կ. Պոլսում Թիւրքական յեղափոխութեան շնորհից մեղրալուսնի կատարեալ լրումն էր։ Լրագիրների կոյտերը, լողալով Ադրիատիկի ամբողջ երկարութիւնը, բերում էին յուզիչ և կիզիչ լուրեր։ Թիւրքիայում ազատութիւն։ Ինչալլահ։ Ու ամեն օր ս. Ղազարի շէմքն անցնելով, լուրջ կամարների տակ հանդիպում էի վարդապետների ժպտուն դէմքերին։ Փառք Աստծու, վերացաւ բռնութիւնը, այլ ևս կարելի է շունչ քաշել...

Հրճւում էր ամիսից շատ Հ. Կարապետը։ Եւ ես հասկանում էի նրան։ Ինչ աշխարհից էր նա, որ ամենաազդու ցոյցերով չփառաբանէր «ազատութիւնը»։ Վենետիկի փողոցներում թէ Լիդո կղզու սուբաթխտ ծառաստաններում նա էր, որ պատմում էր թէ ինչեր են կատարւում Թիւրքաց մայրաքաղաքում։ Ոգևորութիւնը աճում էր օրէցօր, օրքան շատ էին գալիս պոլսական լրագիրներ։ Երիտասարդ վարդապետները հաւատում էին, թէ հասել է հայի թշուառութիւնների վերջը և այնքան լաւատես էին, որ հաւատում էին թէ նոյն իսկ առանձին կաթոլիկ պատրիարքութիւնն էլ կը վերանայ, որպէսզի ազգային իշխանութեան բաժանում չլինի, իշխանութեան, որ, ի հարկէ, զոր չը պիտի ունենար կրօնական հարցերի հետ։

Մի խօսքով մեղրալուսին...

Հ. Կարապետը մի ներբող գրեց «Բազմավէպի» մէջ, ինձ էլ առաջարկեց մի բան գրել, բայց ես, խոստովանում եմ, չէի կարողանում հաւատ ընծայել երիտասարդ Թիւրքերին, քանի որ լաւ գիտէի նրանց պատմութիւնը, նոյն իսկ նրանց հռչակած Միտհաթ-փաշային։ Այդ պատճառով էլ հեռու պահեցի ինձ այն միալար, ամեն տեսակներ ոտնակոխ արած ներբողական տրամադրութիւնից, որ ողողել էր այն ժամանակ հայոց ամբողջ մամուլը...

Եւ այսօր ահա, վերյուշելով այն ջերմ ու եռանդուն օրերը, ուր ամեն ինչ յոյս ու ժպիտ էր ներկայանում, ես տեսնում եմ նրանց մէջ իր ահռելիութեամբ զարգանդ պատճառող հեգնութիւնը։ Մեր ճակատագիրը, դժուար ու արնաքամ, ժամանակ էր գտել մեզ ծաղրելու։ Ու մենք ոգևորուում էինք Թալաաթ-բէյերով, Էնվէր-բէյերով և այլ երիտասարդ սրիկաներով, որոնք այսօր երկնքին հասնող կոյտեր են կազմում հայ դիակներից...

Եթէ Հ. Կարապետ։ Որքան հաւատում էր, անկեղծ կերպով, սուրբ ըզգացմունքով։ Եւ ոմ չէր նրա նման, ոմ այսօրուայ անթիւ նահատակներից ամբողջապէս տոգորուած չէին օսմանցիութեամբ, իրրև փրկութեան գաղափարով։ Եւ ոմ այն ժամանակ կարող էր մտածել անգամ թէ մի օր նա կը զոռայ հայաջնջման գաղափար։

***

Օգոստոսեան մի իրիկնապահ Հ. Կարապետը Վենետիկի կայարանում ինձ բաղեցը Վենետիկի կայարանում ինձ ճանապարհ էր գնում Գարիզ։ Երկու ամիս անցած՝ պատահեցանք Լոզանում։ Նա գնում էր Ֆրիբուրգ, որի հմայարանի ուսանողն էր արդէն։ Վերջին հրաժեշտը ես նրան տուի դոկտոր Ռուի հիւանդանոցում։ Անվերջ բարեմաղթութիւններով էի ճանապարհում երիտասարդ գիտնականին դէպի բարձր ուսում։ Ո՞րքան իղձեր, որքան ակնկալութիւններ։

Թող յաւիտեան անիծեալ լինի Թիւրքական եաթաղանը...

Լեո

ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՏԵՍ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

ԷՐԶՐՈՒՄԻ ԱՌՄԱՆ ԱՌԹԻՒ

ԹԻՖԼԻՍ, 3 փետր. — Կովկասեան բանակի Օգոստափառ Գլխաւոր Հրամանատարը բաղդ ունեցաւ հետևել հեռագիրն ստանալու Էրզրումի զրաւման առթիւ։

«Շնորհաւորում եմ Ձերդ Կայսերական Բարձրութեանը և Կովկասեան բանակին Էրզրումի առման համար։ Խնդրում եմ բարձրաքաջարի զօրքերին իմ ջերմ շնորհակալութիւնը յայտնել իրենց հերոսական սխրագործութեան և այն ուրախութեան համար, որ պատճառեցին Ռուսաստանին՝ Թիւրքական ամրութեան վրայ գործած աջող զրոհով»։

ՆԻԿՈԼԱՅ

ՊԵՏՐՈԳՐԱԴ, 3 փետր. — Կովկասի Օգոստափառ Փոխարքայի ամենահատակ հեռագիրը։

«Տէր Աստուածը Կովկասեան բանակի գերբաջարի զօրքերին այնքան մեծ օգնութիւն ցոյց տուաւ, որ Էրզրումը հինգ օրայ անօրինակ գրոհից յետոյ վերցուած է։ Անպատմելիօրէն ուրախ եմ զեկուցանելու սոյն յաղթութեան մասին Ձերդ Կայսերական Մեծութեանը»։

ՆԻԿՈԼԱՅ

ԳԵՐ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԾՏԱԲԻՑ

3 փետրուարի

Արեւմտեան ճակատ.— Ռիգայի ճակատամասում Ռեպէի հիւսիսարևելեան կողմը բարձրացած գերմանական օդանաւը ստիպուած էր իջնել մեր ծանր թնդանօթների ռմբակոծութիւնից յետոյ։ Թշնամու ծանր արտիլերիան կէս ժամայ ընթացքում ուժեղագէս ռմբակոծում էր Իկսկիւլի նախակամրջի ամրութիւնը։ Դուինսկի ճակատամասում Իլլուկստի շրջանում մեզ աջողուեց երկու պայթուն առաջացնել թշնամու ծանր թնդանօթների վրայ։ Գորբունովկայի և նրանից դէպի հիւսիս գտնուած ճակատի վրայ գերմանացիների գործած երկու յարձակումները յետ մղեցինք։ Վերին Իկսայի շրջանում մեր արտիլերիայի կրակով դադարեցրինք թշնամու փորձերը, որով ուզում էր ռումբերի կրակ տեղալ մեր խրամատների վրայ։ Փետրուարի 1-ին մեր օդանաւը մարտական թռիչք կատարեց դէպի Գոդդորիցէ քաղաքն ու կայանը։ Կայարանի վրայ նետուեցին 7 հատ մի փթանոց ռումբեր, իսկ քաղաքում 5 հատ երկու փթանոց և 3 հատ մի փթանոց ռումբեր մթերանոցների և պաշարակիր սայլերի վրայ։ Հանդիպած թշնամու օդանաւերը կռիւ չընդունեցին և հեռացան։ Մենք յետ մղեցինք թշնամուն, որ փորձում էր յարձակում գործել Ուսեչկոի շրջանում մեր խրամատների վրայ։ Զեռնառուսերով մղուած կռուից յետոյ փոսը մնաց մեզ։

Կովկասեան ճակատ.—Սև-ծովի եզերքին մերձակայ շրջանում մեր զօրքերը, դուրս քշելով թիւրքերին լեռնային մի շարք դիրքերից, յետ շպրտեցին թշնամուն Վիցէսու գետի այն կողմը։ Ինչպէս հաղորդուեց երեկ, Կովկասեան քաջարի զօրքերը տիրեցին Էրզրումի բերդը պաշտպանող Դեէ-Բօյնուի դիրքի 9 մարտկոցները, վերցնելով մօտ 70 թնդանօթ, պաշարներ և գերիներ։ Դժբաղդաբար անհրաժեշտ է ծածուկ պահել մեր այն պանծալի զնդերի անունները, որոնք սուիններով դուրս քշեցին թիւրքերին։ Ներկայումս այդ աջողութիւնը, չնայելով ցրտաշունչ եղանակին և դժուարին տեղագրութեան, ծաւալուում է։ Թիւրքերն արևմուտքից և հարաւից շտապում են օգնութիւն հասցնելու Էրզրումին։ Էրզրումի հարաւային մասն այրում է։ Խնուսի շրջանում յառաջխաղացումը շարունակւում է։

ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՍՏՈԿՀՈԼՄ, 3 փետր.—«Սվենսկա-Դագբլադետ»-ը, քննելով Կովկասեան պատերազմի նշանակութիւնը, ասում է. «Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչի բանակի յառաջխաղացումը մեծ նշանակութիւն ունի մանաւանդ այն պատճառով, որ այդ յառաջխաղացումը սկսած է ձմեռայ մէջ, խիստ ցրտաշունչ եղանակին, լեռների մէջ, որտեղ թնդանօթները 3,000 մետր բարձրութիւն ունեցող սարերի գագաթները հասցնելը կապած է մեծագոյն դժուարութիւնների հետ։ Էրզրումի գրաւումը Ռուսաստանի համար մեծապէս շահաւէտ կը լինի ռազմական և բարոյական տեսակէտից»։

ՍԵԻԱՍՏԱՊՈԼ, 3 փետր.—Այստեղ է բերուած Անատոլիայի ափերին մեր ականակիրների խորտակած առևտրական նաւերի նաւաստիների և փախստական Թիւրքերի մի մեծ խումբ։

ՀՌՈՄ, 2 փետր.—Իշխանութիւնների կարգադրութեամբ պատւիրուած է յարգունիս գրաւել Իտալիայում Թիւրքահպատակներին պատկանող գոյքը։ Գրաւումը պէտք է կատարւի ինչպէս բանկերում ու հասարակական հաստատութիւնների մէջ, այնպէս և մասնաւոր անձերի մօտ. ընդսմին պիտի գրաւուին նաև մասնաւոր անձերի մօտ Թիւրքերի ունեցած գրամները։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՍՈՖԻՈՆ, 2 փետր.—Մի շարք ձերբակալութիւններ կատարուեցին Գերմանիայի օգտին լրտեսութեամբ կասկածողների մէջ։

ՍՈՖԻՈՆ, 2 փետր.—Բոլգար զինուորների դասալիքութեան յարաճուն դէպքերի պատճառով հրաման է արձակած բոլգար բանակին, որով զինուորներին նախազգուշացնում են, որ դասալիքների ընտանիքները պիտի ձերբակալուեն և բանտարկուեն։

ՍՈՖԻՈՆ, 2 փետր.—Ճակատի վրայ կատարեալ հանդարտութիւն է։ Ամեն օր գալիս են դաշնակից զօրքերի մեծ փոխադրանաւեր, ռազմանիւթեր և կենսամթերք։ Ցունկան 7000 հեծելազօրք և մի հետևակ գունդ այստեղից մեկնեցին Լարիսա՝ հին Յունաստան։

Գեն. Սարբայլի խնդիրքով յունական կառավարութիւնն արգելեց Սոլունում ոգևից խմիչքների ներմուծումն ու վաճառքը և գրաւեց նրանց պահեստները խանութներում։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

ԼՈՆԴՈՆ, 3 փետր. — Հաղորդագրութիւն Ֆրանսիայում գտնուող անգլիական բանակի գլխաւոր շտաբի։ Երեկ, ամբողջ ճակատի և Հեհէթից հարաւ Իպրի կազմած անկիւնի ուժեղ ռմբակոծութիւնից յետոյ, թշնամին՝ հետևակ զօրքի մի շարք յարձակումներ գործեց։ Իպր-Կոմին ջրանցքի և երկաթուղագծի միջև թշնամին թափանցեց մեր առաջապահ խրամատի մէջ մօտ 600 եարդ ճակատի վրայ։ Միւս բոլոր գրոհներն ապարդիւն անցան։ Արտիլերիական ուժեղ հրաձգութիւնը շարունակւում է։

ԱՆԳԼԻԱ

ԼՈՆԴՈՆ, 3 փետր.— Համայնքների պալատ։ Ասկիւիթ՝ զահաճառի պատասխանի առթիւ վիճաբանութիւնների ժամանակ խօսք առնելով յայտարարեց, որ դաշնակիցները հաստատ մտադրւել են ոչինչով չզիջել հակառակորդին՝ արևմտեան ռազմաբեմում գործողութիւնների արդի ուժեղացման մէջ։ Յետոյ նա ասաց. «Սերբական բանակը, որ մի ժամանակ ծանր դրութեան մէջ էր գտնուում, հիմա աջողագէս տեղափոխուած է՝ մեծ մասամբ իտալացի դաշնակիցների աջակցութեամբ և օգնութեամբ»։ Ապա Ասկիւիթը ժամանեցեց Կաներուն։ Յոյս ունի գործողութիւնները և յոյսի աջող գործողութիւնները արևելեան Աֆրիկայում։ Միջագետքի գործողութիւնների մասին Ասկիւիթը յայտարարեց, որ դրութիւնը զգալիօրէն լաւացել է և յոյս ունի, որ երկու զօրամասերն աջողութեամբ կը միանան և ոչ մի լուրջ անաջողութիւն չի պատահիլ այստեղ։ Ընդգծելով դաշնակիցների գործողութիւններում մերձեցման ձգտումը, համաձայնեցումն ու միութիւնը, Ասկիւիթ ենթադրում է, որ այդ մերձեցումը կը նպաստեցնէ թշնամու դրութեան առաւելութիւնները, որ ռազմագիտութեան ու դիւանագիտութեան մէջ կարող է գործել կենտրոնացած ուժով՝ այսպէս կոչուած ներքին գծերով։ «Կառավարութիւնը, ասաց Ասկիւիթը, որոշեց Անգլիայում լիովին յայտնել՝ մարդկանց, ռազմանիւթի, արդիւնաբերական պահեստների և ֆինանսական ոյժերի բոլոր աղբիւրները թէ ներկայ բոպէի, և թէ ապագայի, որպէս զի մենք կարողանանք ամենամօտ ամիսներում ամենամեծ չափով աջակցել ընդհանուր գործին»։ Յետոյ Ասկիւիթը խօսեց Մեծ Բրիտանիայի վրայ ընկած պատասխանատուութիւնների բարդ բեռոյթի մասին, և ճառը վերջացրեց հետևեալ խօսքերով. «Մեր կենդանի ոյժի անօրինակ լարումից զատ, մենք պարտաւորուեցանք ծախսել ոչ միայն մեր գործողութիւնների համար, այլ և առաջնորդող մասնակցութիւն ունենալ պատերազմի մի քանի կարեւոր ջղեր հայթայթելու համար մեր գաղութներին ու դաշնակիցներին»։ Ասկիւիթը մատնանշեց ֆինանսական այն ահագին բեռը, որ իր վրայ է վերցրել երկիրը, և աւելացրեց. «Ես յոռետես չեմ և երբէք չեմ եղել։ Եթէ նոյնիսկ լինէի, ես հիմա կը դադարէի յոռետես լինելուց։ Միայն երկու միջոց կայ ֆինանսական բեռը տանելու համար—առաջին՝ հարկերը բարձրացնել մեծ չափով, ինչ որ շուտով կառաջարկի Մակկենայի կողմից, երկրորդ՝ մեր վարկը պահելով, որ մեր դաշնակիցների ամենաթանկագին սեփականութիւնն է։ Մենք պէտք է պաշտպանենք արդիւնաբերական արտադրութիւնն ու մեր արտահանութեան առևտուրը, կրճատենք աւելորդ ներմուծումը և շքեղութեան առարկաների գործածութիւնը, ամենացած թւի հասցնենք մեր ծախքերը»։

ԾՈՎԻ ՎՐԱՅ

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 2 փետր.—«Ցիսիէ Ցայտունգին» հեռագրում են Ամստերդամից. հոլանդական ու չէդական շոգենաւային ընկերութիւններն առաջարկեցին իրենց գործակալութիւններին՝ տոմսեր չծախել կենտրոնական պետութիւնների հպատակ մինչև 55 տարեկան տղամարդկանց, քանի որ Անգլիան յայտարարել է, թէ նրանք պիտի վերցուին նաւից և տարուին Անգլիա։

ՍՏՈԿՀՈԼՄ, 3 փետր.—Գերմանական միսսիան ծանուցեց չէդական արտաքին գործերի մինիստրութեան, որ ամենամօտ ժամանակում գերմանացիներն ականներ և թշնամու նաւերի դէմ կուռ ուրիշ զէնքեր պիտի գնեն՝ չէդական տերրիտորիալ ջրերի սահմանից դուրս մի քանի տեղերում, հիւսիսային լայնութեան 55 աստիճան 18 բոպէի և 55 աստիճան 26 բոպէի, և արևելեան երկարութեան 12 աստիճան 42 բոպէի ու 13 աստիճանի միջև գտնուած տարածութեան վրայ։

„ՀՈՐԻԶՈՆԻ" ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՑ

Կարս, 3 փետրուարի

(Հեռագրով)

Էրզրումի առման առթիւ քաղաքում անսովոր խանդավառութիւն է տիրում։ Ամբողջ բնակչութիւնը հանդիսաւոր թափօր է կատարում երգելով, զուռնայով, երաժշտական խմբով, գաղաքը լուսաւորուած է և դրօշակներով զարդարուած։ Վաղը հայոց եկեղեցում նշանակուած են հանդիսաւոր մաղթանք և հոգեհանգիստ թիւրքական ամրութիւնը վերցնելիս ընկած հերոսների համար։

Զաւոյեան

ԹՇՆԱՄԻՆ

Աշրաֆ

Միջահասակ, թիկնեղ։ Բայց կուրծքը պղնձէ յղկած վահանի էր նմանվում, կորընթարթ, ասես դէմ էր ընկել բոլոր հարուածներին, որ ուղղուել են նրան։ Սրունքները բարակ, պողպատեայ։

Աչքերը խոշոր, յօնքերը խոժոռ, քիթը ձուլածոյ։

Առնական ուժեղ շունչ էր պատում ամբողջ դէմքը։ Հզօր մի կամք, կայծեց, զսպել, իրար օղակել, շակել ու համադրել էր մարմնի բոլոր շարժումները։ Նայուածքի, խօսուածքի, պատուածքի մէջ իշխում էր մի միակ կամք և այդ կամքից դուրս՝ ուրիշ ոչ մի զգացմունք գոյութիւն չունէր նրա էութեան մէջ...

Երբ նրան, ձեռքերը մէջքին պարապած, բերին կանգնեցրին մեր առաջ,—նա հանգիստ, աննշմար դրստուեց ոտից գլուխ՝ մի արձան դարձաւ. շունչն իսկ կտրուեց, արտանունքները կանգ առան անթարթ՝ կամքի մէկ ցանկութեամբ։ Աչքերը մեզ ուղղուեցին—կարծես վաղուց արդէն ուղղուած էին մեզ վրայ, և այդպէս էլ մնացած թացին։ Մանր հայեացք էր՝ ճնշող, անհանգստացնող. պող կապուածքիւն կար աչքերի մէջ։

Գիտէինք արդէն, թէ ով է այդ մարդը։ Աշրաֆն էր, որ մէկ տարուց աւել՝ սարսափներ էր տարածել հայ գիւղերում։ Զարկել, կողոպտել, բռնաբարել էր անխնայ։ Երեխաներին էր մորթել, ծերերին մորթել—չէր դրել ոչ մի տարբերութիւն։ Ոչ գութ, ոչ ափսոսանք։ գեղեցիկն էլ, տգեղն էլ հաւասար չափով անխտիր զոհ էին գնացել նրա սրին ու գնդակին...

— Դու՞ ես Աշրաֆը։

Ինքն էր, ի հարկէ. կարիք չկար հարցնելու։ Եւ նա պատասխան չտուեց. կենդանակերպ արձանը արձան էլ մընաց՝ սառը, անտատան։

Նայեցինք վրան։ Վայրկենական մի հանդէս եղաւ՝ լուռ, զուսպ, մտատանջ — բոլորս էլ լռեցինք, թէև բոլորս էլ տրամադրուել, լցուել էինք կանխապէս՝ խիստ դառը նախատինքներ թափելու վրան—այնքան շատ էր եղել ու բուռն՝ մեր սրտմտութիւնն ու զարհուրանքը նրա դէմ...

Տաճիկ էր, երիտասարդ, թարմ, դեռ նոր ծաղկող, հազիւ 25 տարեկան։ Գերի էր ընկել նախընթաց օրը։ Մեր մի հարիւրեակ, որ ուղարկուել էր ծովափի կողմը, կուի էր բռնուել՝ յաղթել թշնամուն և գերի վերցրել մօտ 30 մարդ, որոնք Աշրաֆի գլխաւորութեամբ, կուել էին մինչև վերջին փամփուշտը։

Յաղթութեան լուրը նոյն երեկոյեան հասաւ մեզ։ Եւ ամբողջ գիշեր մեր կամաւորներից երկու հոգի՝ պահեցին ճամբան, որտեղից պիտի գերիները բերուէին։ Մի քանի անգամ պնդացրին սինը հրացանի փողին։ Մէկը, լուսնի լուսի տակ, մաուզեր ատրճանակը քաշեց, մաքրեց, տեղը դրեց, լցրեց. միւսը դաշոյնը նայեց։ Սպասում էին Աշրաֆին, որը նրանցից մէկի հօրն ու եղբօրն էր սպանել միաժամանակ, միւսի էլ քրոջն էր բռնաբարել՝ պահել մօտը տան օր և ապա ծովը ձգել։ Մայլ, անհամբեր, զարկեալ պատրաստ, բորբոք վրէժի դառնութիւնից խեղդուած... Բայց նրանք էլ լռեցին՝ Աշրաֆի առաջ։ Մղկատցին ու զսպուած, կարծես սանձահար՝ սկսեցին խանձուել ու այրուել վրէժի կրակից... Եւ համբերելը փոքրկոտ տանջանք էր նրանց համար. կարող էր սիրտը տանել այդքան բեռ...

Հարցրինք Աշրաֆին.

— Դու՞ ես սպանել, մէկ ամիս առաջ, Առորք գիւղի քահանային։

Զպատասխանեց։

— Դու՞ ես սպանել Առորքում Եղիշէյենց Զնդոյին։

Աշրաֆը լուռ մնաց։

— Դու՞ ես սպանել Մկրտչէի ուէսին և նրա երկու որդոց։

Դարձեալ լուռ մնաց։

— Դու՞ ես սպանել Ալվարքցի Յակոբ ու Պետրոս եղբայրներին։

Դարձեալ լուռ մնաց։

— Դու՞ ես կտրել Տէր-Յովհաննէս ծերունի քահանայի պարանոցը։

Դարձեալ լուռ մնաց։

— Դու՞ ես սպանել, ծովը նետել այս գիւղի Պողոս-վարժապետին։

Անխախտ լռութիւն...

— Դու՞ ես սպանել սրա հօրն ու եղբօրը...

Բարձր մղկտաց, տանջալից ու սպառնալից շնչաց կամաւորը և դուրս հանեց ատրճանակը։ Նրա առաջները զարկուեցին իրար և կրճատցին։ Նրա ընկերներն էլ, չորս կողմը խռնուած, յուզմունքից զարկին ոտքերը գետնին. աղմուկ բարձրացաւ՝ «խփէք, սատ-

digitised by A.R.A.R.@

կեցրէք...ինչի՞ ենք սպասում... ինձ տուէք սպանեմ»...

— «Ե՞ս պէտք է սպանեմ»—զրսպուած ու հանդարտ գոռաց միւսը, որի քրոջն էր սպանել Աշրաֆը. «պարոն հրամանատար, կաղաչեմ Աշրաֆն ինձի կը պատկանի»։

— Լռութի՛ւն, տղէրք։

Աղմուկը նստեց... Ցուզմունքի, սպառնալիքի, ատելութեան միջին՝ Աշրաֆը ճաց անշարժ. ասես ժայռ լինէր կանգնած՝ փրփրաղէզ ալիքների դէմ։ Եւ միայն յետոյ, երբ լռութիւն տիրեց, Աշրաֆի աչքերը շողացին և շրթունքին ժպիտ երևաց. երկուսն էլ խաղուն ու հեգնիչ։ Ժպտաց ու ասաց.

— Հափիսի բէան օլդիւրդիւմ (Ամենքին էլ ես եմ մեռցրել)։

— Սրա քրմէն էլ։

— Աւադ (Այո)։

Եւ դարձեալ ժպտաց։ Ժպտաց մի քանի անգամ՝ միշտ միևնոյն ձևով, միևնոյն չափով՝ խաղով ու հեգնանքով։

Այլևս ոչ մենք նոր հարց տուինք, ոչ էլ նա խօսք ասաց։

... Վերջին վայրկեանին, երբ երեք հրացան ուղղեցին նրան,—հին հզօր կամքը վերից վար անցաւ նրա մարմնի միջով և մենք չնշմարեցինք ոչ մի ցնցում... Ժպիտն էր միայն, որ կորաւ մէկէն, և աչքերը փակուեցին...

Դիակն իսկ, ասես, կամք էր շնչում դեռևս անշարժութեան ու ուժեղութեան մէջ։

Վալադեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

ԱԻԱԳՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Պետական Դումայի ազխատանքների ծրագիրը

Յունուարի 28-ին կայացաւ ֆրակցիաների ներկայացուցիչների երկրորդ ժողովը, որը զբաղուեց Պետական Դումայի առաջիկայ գործունէութեան ծրագրով։ Յայտարարուեցին զանազան ծրագրեր։

1) Առաջադիմական բլոկի ծրագիրը։ Նախագահը յիշեցնում է, որ դեռ յուլիսին աւագների կողմից հաստատուած ծրագրի մէջ մտան հետեւեալ օրէնսգծերը. ցենզուրայի մասին, պոստային ծառայողների կիրակնօրեայ հանգստի, 1890 թուի զեմստուոյական կանոնադրութեան փոփոխման մասին, պետութեան ծայրագաւառներում զեմստուո մտցնելու, ռեիզիանների հաստատման, մշտական ժուժկալութեան, մանր զեմստուոյական միաւորի և զեմստուոյական ու քաղաքային համագումարների և միութիւնների մասին։ Այս ցանկին Պուտկամմերը աւելացնում է և լեհերի իրաւունքների սահմանափակման վերացումը։

2) Ս.-դեմոկրատների ծրագիրը։ Զեխիձէն առաջարկում է մտցնել ծրագրի մէջ. արքունական ձեռնարկութիւնների մէջ աշխատող բանւորների, նորմալ հանգստի, բոլոր ազգային սահմանափակումների վերացման մասին, ծայրագաւառների տեղական ինքնավարութեան մասին, ազատութիւնների, պարլամենտական իմմունիտէտի, անձի անձեռնմխելիութեան, արտակարգ դրութիւնների և վերջապէս Կովկասում խիզանական յարաբերութեան վերացման մասին։

3) Աշխատաւորականների ծրագիրը։ Անհրաժեշտ է. շուտափոյթ ամնիստիա, ժամուլի բոլոր սահմանափակումների վերացում, հաստատուն անձի անձեռնմխելիութեան, քաղաքացիական կատարեալ հաւասարութիւն և ֆինլանդական սահմանադրութեան վերահաստատութիւն, ժողովների, միութիւնների ազատութիւն, արհեստակցական միութիւնների վերականգնումը և նրանց ադմինիստրատիւ կարգով փակելու կարգի վերացումը, հիմնական կօոպերատիւ օրէնք, ստեղծուած աշխատանքի բորսաների և հաշտարար կամերաների։

Այս բոլորը իրագործելուց յետոյ միայն Պետական Դուման կարող է, յենելով երկրի կազմակերպած կարծիքի վրայ, ռազմավարեցնել քաղաքային և զեմստուոյական ինքնավարութիւնները և միջոցներ ստեղծել շուտափոյթ մտցնելու մանր զեմստուոյական միաւորներ։ Պէտք է այնուհետև օրինականացնել գիւղացիների ձեզուտուը արդարացի կերպով լուծելու հողային հարցը, օրէնսդրական կարգով վերացնել նոյեմբերի 9-ի օրէնքը, և ազնուականների և գիւղացիական բանկերի գործունէութիւնը հողային ֆոնդի բաշխման վերաբերմամբ, մինչև որ Դուման հիմնական վերաքննութեան կենթարկի հողային հարցը։ Դումայի իրաւունքները լայնացնել, հարցապնդումների իրաւունքը լայնացնել, իրաւունք տալ Դումայի մասնաժողովներին փաստաբէն քննելու պետական գործունէութեան ամեն մի ճիւղը։ Դուման պիտի միջոցներ ձեռք առնի այս նստաշրջանը բաւականաչափ տևական դարձնելու համար, որպէսզի անցկացնի այն բոլոր օրէնսգծերը, որոնք անհրաժեշտ են հասարակական ոյժերի կազմակերպման և ժողովրդականացիայի համար։ Շատ կարևոր է վերջապէս պատգամաւորական խօսքի ազատութիւնը։ Պէտք է վերջապէս որ նոր պրիմիերը նախօրօք յայտնի, որ ազատ խօսքը չի ոտնահարուի։

4) Կադետների ծրագիրը։

Պետական Դուման պիտի զբաղուի Թիկունքի կարգաւորութեամբ և երկրի քաղաքացիական իրաւունքների ապահովմամբ։ Այդ տեսակէտից ծրագրի մէջ պիտի մտցնել հետևեալ հարցերը։ Միջոցներ գերմանական ներքին զօրութեան դէմ, — կռիւ Թանգութեան և սպեկուլացիայի, կաշառակերութեան և պետական գանձարանի կողոպտողների դէմ, ռուս պաշտօնէութեան ազատագրումը, այսինքն 3-րդ կէտի ոչընչացումը, նոր կենսաթոշակային կանոնադրութիւն, ռեիզիանների կանոնադրութեան վերաքննութիւն, պետական կոնտրոլի բարեփոխութիւն, կօոպերատիւների օրէնք, Դումայի բիւջետական և ինպերպելացիոն իրաւունքների լայնացումը, ուղղափառ ծխական համայնքների վերանորոգչութիւն, զեմստուոյի հաստատումը ծայրագաւառներում և կողակների շրջաններում, մանր զեմստուոյական միաւոր, արտակարգ դրութիւնների և զինուորական ցենզուրայի վերքննութիւն, շինականների և կողակների դասային սահմանափակումների վերացում, արհեստակցական միութիւնների ազատութեան ապահովութիւն, հնածէսների իրաւական սահմանափակումների վերացում և այլն։ Բացի դրանից, Պետական Դուման միջոցներ պիտի ձեռք առնի, որ կառավարութիւնը ըստ կարելոյն սահմանափակի հիմնական օրէնքների 87 յօդուածից օգտուելու սովորութիւնը։ Հենց այս նստաշրջանում պէտք է քննութեան առնուին այդ կարգով հրատարակուած օրէնքները։

5) Ռազմական նախագծեր։

Կրուպենսկին պնդում է, որ առաջին հերթին պիտի քննուին զինուորական օրէնսգծերը։

Շինդարեվը յայտնում է, որ զինուորական-ծովային մասնաժողովը արդէն պատրաստել է օրէնսգծեր պահեստի զինուորների ընտանիքների օգնութեան և այրիների ու որբերի կենսաթոշակի մասին։

6) Ազգային հարցեր։ Մուսուլման խմբակի ներկայացուցիչ Տեկելը առաջարկում է մտցնել ծրագրի մէջ ազգային և կրօնական սահմանափակումների վերացման և մի կրօնից միւսն անցնելու ազատութեան պահանջը։ Բացի դրանից առաջարկում է փոխել Պետական Դումայի ընտրողական օրէնքը վերականգնելու համար ծայրագաւառների ներկայացուցիչներ, որը վերացել եւ կոնսուլ 1907 թուի յունիսի 3-ի օրէնքով։

Ենիկէլը պնդում է ազգային հարցի շուտափոյթ լուծման վրայ։

Մարկով 2-րդը դէմ է բոլոր այս առաջարկներին, մանաւանդ ազգային հարցի շուրջը։ Նա ասում է, որ չի կարելի պահանջներ անել ռուս ժողովրդին։

Երկար վիճաբանութիւններից յետոյ աւագների խորհուրդը բոլոր նախագծերը յանձնում է ֆրակցիաներին ի եղրակացութիւն, որից յետոյ հարցը նորից կը դրուի խորհրդի առաջ և վերջնական լուծում կը ստանայ։

ՄԱՄՈՒԼ

Մեր գիւղացիութեան պարենաւորման խնդրին նուիրած մի յօդուածի մէջ «Գիւղատնտես» շաբաթաթերթն ասում է.

Մանր և դժուարին կացութիւն է ստեղծուել այսօր մեր գիւղացիութեան համար. եթէ սովորական ժամանակ նրա տնտեսութիւնն եղել է աննախանձելի դրութեան մէջ, այժմ, պատերազմական բացառիկ հանգամանքների շնորհիւ, նրան սպառնում է կատարեալ քայքայումն։

Բոլոր այն գործօնները, որոնցով կենդանի է և կանգուն տնտեսութիւնը, զգալիօրէն նուազել են. գիւղը զրկուել է բազմաթիւ ուժեղ և շինարար բանւոր ձեռքերից, ինչպէս նաև դեկավարող ինտելիգենտ և մասնագէտ ոյժերից. օրէցօր պակասում են լծկան և կաթնատու անասունները. չափազանց դժուարացել է հաղորդակցութիւնը. խանգարուել են արտահանութիւնը և ներմուծումը կենսական այլ և այլ մթերքների։ Միևնոյն ժամանակ աւելացել են գիւղացու ծախքերը, թանգացել է կեանքը, իսկ տնտեսութեան արդիւնքը շօշափելի կերպով սկսել է նուազել։

Ի լրումն տնտեսութեան այս անմխիթար պատկերի, անցեալ տարի տեղի ունեցաւ հացահատիկների, բամբակի, խաղողի և պտուղների անբերրիութիւն։ Թէ դաշտավայրերում և թէ լեռնային մասերում բերքը սատցուել է չափազանց անբաւարար՝ շնորհիւ ցրտահարութեան, երկարատև անձրևային սառն եղանակների, հողի անժամանակ մշակութեան և ցանքի ուշանալուն։ Նոր-Բայազէտի գաւառի մի շարք գիւղերում և այլ տեղերում ցանքերը ոչնչացել են կարկուտից. մեծ ջնաս են հասցրել այգիներին սընկային հիւանդութիւնները՝ միլդիուն և թոզը, հացաբոյսերին՝ սուսկն և միջատները, բամբակին՝ կնգուղի որդը։

Գիւղացիները կարիք ունեն թէ՝ ալիւրի և ցորենի և թէ սերմացուի։ Վերջինի վերաբերմամբ Ընկերութեան Վարչութիւնը նպատակայարմար է գտնում ըստ կարելոյն բաւականանալ տեղական սերմացուով, որովհետև ուրիշ տեղերից դժուար է ներկայումս տեղական պայմաններին համապատասխան սերմացու ձեռք բերել և երաշխաւորել, որ սերմացուն կը հասնի իր ժամանակին։ Ինչ վերաբերում է ուտելու հացին, Ընկերութեան Խորհուրդը յարաբերութիւնների մէջ է մտած յիշեալ նահանգների նահանգապետների և երկրագործութեան մինիստրի Կովկասեան լիազօրի հետ և ամեն կերպ աշխատում է արագացնել վագոնների նարեաղների թոյլտուութիւնը, որպէս զի կարելի լինի հիւսիսային Կովկասից գնած հացը տեղափոխել։

Դժբախտաբար երկաթուղային գծի անկանոնութիւն, վագոնների սահմանափակ թիւն և զինուորական անյետաձգելի պահանջները թոյլ չեն տալիս իր ժամանակին հաց հասցնել գիւղացիներին։

Գիւղացիութեան պարենաւորման հարցը ծառացել է մեր առաջ իր ամբողջ լրջութեամբ և սուր բնաւորութեամբ։ Անհրաժեշտ է ձեռնարկել արտակարգ միջոցների լայն չափերով նրան բաւարարելու համար։ Ժամանակ է, որ մեր միւս հասարակական հիմնարկութիւնները միանան Հայոց Գիւղատնտեսական Ընկերութեան հետ և ընդհանուր ջանքերով աշխատեն ազատել մեր գիւղացիութիւնը սովի հիրաններից, իսկ նրա տնտեսութիւնը՝ վերջնական քայքայումից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՐԱՏՈՒ

ԹԻՖԼԻՍ

✦ Փետրուարի 3-ին, պետական հեռագրական գործակալութեան պաշտօնական հաղորդակցութիւնից առաջ Էրզրումի գրաւման ուրախալի լուրը կայծակի արագութեամբ տարածուեց Թիֆլիսում. ցերեկւայ ժամը մօտ 3-ին քաղաքը զարդարուեց դրօշակներով և մեղմ թափող անձրևի տակ ազգաբնակչութիւնը լցուեց փողոցները և սկսեց մի չտեսնուած եռ ու զեռ։

Զինուորական և Սիօնի տաճարներում տեղի ունեցան մաղթանքներ, որոնց ներկայ էր Կովկասի Օգոստափառ Փոխարքան։ Երեկոյեան ժամը 6-ից սկսած բազմութիւնը սկսեց հետզհետէ խտանալ Փոխարքայի պալատի առաջ։ Թիֆլիսի արական գիմնազիաների աշակերտները իրենց երաժշտական խմբերով և զոյնզոյն լապտերներով կանգնած պալատի առաջ նուագում և երգում էին. այդ ուրախ ցոյցին մասնակցում էին Կրծանիսի բոլոր հայ որբանոցների որբ-որբուհիներն իրենց կառավարչուհիների և ուսուցիչների հետ. այդտեղ էր և Թիֆլիսի զուռնաչիների խումբը։ Բուռն օվացիաների տակ Կովկասի Օգոստոսափառ Փոխարքան մի քանի անգամ դուրս եկաւ և շնորհակալութիւն յայտնեց ցուցարարներին։

Փետրուարի 4-ին, առաւօտեան, Թիֆլիսի բոլոր դպրոցների աշակերտաշակերտուհիները արձակուեցին երեք օրով։ Առաւօտեան ժամը 9-ից Երեւանեան հրապարակում, քաղաքային տան առաջ կառուցուում էր ամպհովանի հանդիսաւոր մաղթանք կատարելու համար. ժողովուրդը կամաց-կամաց հաւաքուում էր։ Ցերեկւայ ժամը 12-ին հոծ բազմութեան ներկայութեամբ, Վրաստանի էկզարխ Պլատոնի գլխաւորութեամբ տեղի ունեցաւ գոհաբանական մաղթանք, որին ներկայ էին Կովկասի Օգոստափառ Փոխարքան, Մեծ Իշխանուհի Անաստասիա Նիկոլայևնան, Փոխարքայի օգնականները, նահանգապետը, ոստիկանապետը և ուրիշ զինուորական բարձր պաշտօնեաներ և անձեր։ Մաղթանքից յետոյ Օգոստափառ Փոխարքան զօրքի և ժողովրդի միահամուռ «ուռա»-ների տակ աւտոմոբիլով մեկնեց պալատը, որին հետևեցին զինուորական երաժշտական նուագախումբը և զինուորները։ Ժողովուրդը ցրուեց ցերեկւայ ժամը 3-ին։

✦ Շաբաթ, փետրուարի 6-ին, Թիֆլիսի բոլոր դպրոցների աշակերտաշակերտուհիները արձակուեցին երեք օրով։ Առաւօտեան ժամը 9-ից Երեւանեան հրապարակում, քաղաքային տան առաջ կառուցուում էր ամպհովանի հանդիսաւոր մաղթանք կատարելու համար. ժողովուրդը կամաց-կամաց հաւաքուում էր։ Ցերեկւայ ժամը 12-ին հոծ բազմութեան ներկայութեամբ, Վրաստանի էկզարխ Պլատոնի գլխաւորութեամբ տեղի ունեցաւ գոհաբանական մաղթանք, որին ներկայ էին Կովկասի Օգոստափառ Փոխարքան, Մեծ Իշխանուհի Անաստասիա Նիկոլայևնան, Փոխարքայի օգնականները, նահանգապետը, ոստիկանապետը և ուրիշ զինուորական բարձր պաշտօնեաներ և անձեր։ Մաղթանքից յետոյ Օգոստափառ Փոխարքան զօրքի և ժողովրդի միահամուռ «ուռա»-ների տակ աւտոմոբիլով մեկնեց պալատը, որին հետևեցին զինուորական երաժշտական նուագախումբը և զինուորները։ Ժողովուրդը ցրուեց ցերեկւայ ժամը 3-ին։

✦ Շաբաթ, փետրուարի 6-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում տեղի կունենայ Թիւրքահայ յայտնի գրականագիտուհի տիկին Զապէլ Եսայեանի հանրաքննական դասախօսութիւնը հետևեալ նիւթի մասին. «Հայկական վերջին հարցանքները կ. Պոլսում»։ Դասախօսը մանրամասն կանգ կառնի Թիւրքիայի ընդհանուր զօրահաւաքի ժամանակ տիրող տրամադրութեան վրայ դէպի քրիստոնեաները, կը խօսի Թիւրք ժամուլի, Դարդանէլի յարձակումների, կրօնական պատերազմի հոչակման, Լնէրի և Թալէաթի քաղաքական ձգտումների մասին։ Երկրորդ կանգ կառնի հայ ինտելիգենցիայի հարցանքների և հայ ժողովրդի տեղահանման խնդիրների վրայ։ Տեղերի գները 50 կ. սինչև 2 ռ.։ Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։

✦ Կովկասեան ռազմաճակատի գաղթականական գործի գլխաւոր լիազօր գեներալ-մայոր Թամամշևի կարգադրութեան համաձայն, յունուար ամսւայ համար Ուրմիայի հիւպատոսարանի անունով փոխադրուած է Ուրմիայի գաղթականներին—15,000 ռ., Խոյ—3,677 ռ., Դիլման—18,000 ռ., Վանի շրջանի զինուորական կառավարչի անունով 1,544 ռ. և Դիադինի գաղթականներին 500 ռ.։

✦ Այսօր, ուրբաթ, Գրական-Գեղագիտական սալոնի հերթական jour-fixe-ին բժշկապետ պ. Վահան Արծրունին կը կարդայ իր երկրորդ ռեֆերատը՝ «Ոճրագործ ամբոխի հոգեբանութիւնը»։ Սկիզբը եր. ժ. 9-ին։

✦ Երկուշաբթի, փետրուարի 1-ին, երեկոյեան տեղի ունեցաւ Քաղաքների Միութեան կից՝ գերիներին օգնող կոմիտէի առաջին նիստը. կոմիտէի լիազօր է ընտրուած Օ. Ս. Բուկշտէյն, նրա օգնական լիազօր—Լ. Ն. Լեբեդինսկայեա, գանձապահ՝ Մ. Ս. Սիգնալ, քարտուղար՝ Ն. Ի. Վորինսկայեա։ Որոշուած է Կոպենհագենի բիւրօի միջոցով գերիներին ուղարկել 3,000 ռ. և 1,000 կտոր պասիլկա և մի շաբթից յետոյ էլի ուղարկել 3,000 ռուբլի։

✦ Երեքշաբթի, փետրուարի 2-ին, Թիֆլիսի շրջանային դատարանի 2-րդ քրէական բաժանմունքի սեսսիան մեկնեց Դուշէթ. սեսսիայի նիստերը նշանակուած են փետրուարի 3-ից մինչև նոյն ամսւայ 7-ը։

✦ Շաբաթ, փետրուարի 6-ին, Հասարակական Ակումբի նախաձեռնութեամբ, Յովհ. Բաջանունու ռեֆերատի առթիւ տեղի կունենայ զրոյց հետևեալ նիւթի մասին. «Ազգային կուլտուրան որպէս գործօն աշխարհի քաղաքակրթութեան»։ Նոյն օրը տեղի կունենայ նաև ակումբի անդամների տարեկան ընդհանուր ժողով։

✦ Ա. Գ. Այվազեանի Թաղումը յետաձգուել է կիրակի, փետրուարի 7-ին։ Թաղման հանդէսին ներկայ կը լինի քաղաքային վարչութիւնն իր ամբողջ կազմով։

✦ Փետրուարի 2-ին պրոֆեսոր Կաղուստինը բժիշկ Լունկևիչի և պ. պ. Ալիբէկովի ու Լիսիցեանի առաջնորդութեամբ դիտեցին Թիֆլիսի ծծմբային աղբիւրները։

✦ Յունուար ամսում Թիֆլիսի բուսաբանական այգին այցելել են 3,000 մարդ։

✦ Քարածուխի պակասութեան պատճառով, փետրուարի 1-ից ֆունիկուլյերի երթևեկութիւնը դադարած է։

✦ Փետրուարի 9-ին, արքունական թատրոնում տրուում է մի ներկայացում Թիֆլիսի խուլ ու համրերի պանսիոնի օգտին։

✦ Քաղաքների Միութեան Կովկասեան կոմիտէն մօտ օրերս Սարիղամիշ է ուղարկում 8 վագ. ալիւր։

ԿԵՍՆԵՔԸ ԲԱԳԻՒՈՒՄ

Նամարի կրիզիսը.— Ես գրել էի շաբաթի թանգութեան և օր-աւուր սպառնացող կրիզիսի մասին։ Գրել էի սպեկուլանտների, այդ գործում դեր խաղացող առևտրականների մասին։ Նոյնը շարունակւում նաև այժմ, թէև քաղաքային վարչութիւնը ամեն կերպ աշխատում է այդ անխիղճ շահագործման առաջն առնել, ինչպէս և ապահովել շաբաթի պահեստը ոչ միայն Բագուի, այլ և միւս քաղաքների համար։

Այժմ պարզուում է հետևեալը. Թէև Բագուում հետզհետէ բարձրանում է շաբաթի գինը և մինչև իսկ նրա պակասն է զգացուում, բայց միւս կողմից տասնեակ վագոններով շաբաթ է արտահանուում Պարսկաստան։ Այս արդէն անհերքելի փաստ է։ Միայն երեք օրւայ ընթացքում, յունուարի 23-ին, 24-ին և 25-ին, Պարսկաստան է ներմուծուել 74 վագոն Մարսէյլեան շաբաթ, 23 վագոն «Восточное об.»-ի և 51 վագոն «Кавказъ и Меркурій»-ի շոգենաւերով։ Ահա ինչ աստիճանի է հասել սպեկուլացիան։

Ամեն ինչ կայ, բացի միայն լաւ կազմակերպութիւնից, աչալուրջ հսկողութիւնից։

Նոյնը նաև մսի վերաբերմամբ, որ այս վերջին օրերս շատ սուր բնաւորութիւն է ստացել։ Եւ այն աստիճան, որ մինչև իսկ տեղ է գտնում այն միտքը, թէ ինչ միջոցներով կարելի է փոխարինել մսի պակասը։

Մայիլեանցներ եւ մի նոր հայոց դպրոց.— Երկու օր առաջ հողին յանձնուեց մի ժառանգաւոր կեանք, օրիորդ Թերեզա Մայիլեանը։ Ծնողները, իրենց դստեր յիշատակը յաւերժացնելու համար, որոշել են Բագուի շրջանում, գաւառում հիմնել մի հայոց տարրական դպրոց, իրենց վրայ վերցնելով ամբողջ ծախսը։ Տեղը դեռ ևս որոշուած չէ։ Նրանց ցանկութիւնն է, որ այդ նոր «Թերեզեան» դպրոցը լինի այնպիսի վայրում, ուր շատ կարիք կայ այդպիսի մի հիմնարկութեան։

Բացի այդ, Մայիլեանները միանուագ 500 ռուբլի յանձնել են Բագուի Գաղթականական կոմիտէին, գաղթականներին յատկապէս ճաշ տալու համար։

Արել են նաև ուրիշ մանր նուիրաբերութիւններ։

Հայկական դրամատիկ ճերկայացումներ Բագուում.—Զարիֆեանի դրամատիկական խումբն արդէն երկրորդ շաբաթն է, այստեղ է։ Ամսի 21-ին տեղի ունեցաւ առաջին գաստրոլը և խաղացին Շանթի «Հին Աստուածները», իսկ յունուարի 28-ին տեղի ունեցաւ երկրորդ գաստրոլը, Լէօի «Մելիքի Աղջիկը», հեղինակի փոխադրութեամբ։ Դահլիճը, Մայիլեանների մեծ թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր։ Շատերին գրաւել և թատրոն էր քաշել յատկապէս անցեալ տարւայ բարձրացրած աղմուկը, որ այնքան անախորժ բնաւորութիւն ստացաւ։ Հասարակութեան գիտակից տարրի մի մասին առանձնապէս հետաքրքրում էր նոր փոխադրութիւնը, կատարուած հեղինակի միջոցով, որ անաջող և անհարազատ համարելով օր. Եղոյեանի փոխադրութիւնը, արգելք դրաւ նրա վրայ։ Եւ պէտք է անկեղծօրէն խոստովանուել, որ ընդհանուր տպաւորութիւնը աննպաստ էր հեղինակի համար։ Չհաշուած առաջին գործողութիւնը, որ համարեա թէ նման է օր. Եղոյեանի փոխադրութեան, առհասարակ պիէսը անցնում է ձանձրալի, և ոչ թէ խաղի, դերասանների պատճառով, այլ հենց պիէսի շնորհիւ։ Նա շատ ձգձգած է։ Գործը մեծապէս ցնսուել է նաև նրանով, որ շատ մեծ տեղ է տուած կոյսին, ինչ որ չկայ Եղոյեանի փոխադրութեան մէջ։ Այդ հանգամանքը վնասել է նաև մելիքի կնոջ տիպի ամբողջականութեան։ Անկենդան անցաւ նոյնպէս վերջին գործողութիւնը։

Բագուեցի

ԱՐԻԵՍՏ ԵՒ ԳԻՏՈՒԹ.

ՀԱՆԴԷՍՆԵՐ ԵՒ ԵՐԵԿՈՅԹՆԵՐ

ԱՅՍՕՐԱՆ ՇՔԵՂ ԵՐԵԿՈՅԹԸ

Այսօր, Թիֆլիսի ժողովարանում տեղի է ունենալու մի երեկոյթ-ներկայացում գրական-գեղարուեստական շրջեղ բաժնով։

Այդ երեկոյթը տուում է բարելաւելու Կովկասեան Հայ Ուսուցչական Միութեան միջոցները՝ յանուն նրա նախաձեռնութեամբ կազմակերպուած փախստական երեխաների ուսման գործի յաջողութեան։

Ուսուցչական Միութիւնը տասը տարուան գոյութիւն ունի։ Նա, իբրև հասարակական մի գործօն հաստատութիւն, իր գոյութեան ընթացքում, հայ հասարակութեան կուլտուրական ամեն մի ձեռնարկութեան համար տուել է իր ոյժերից լաւագոյնը, իր ընկերակից ու պաշտօնակից անդամների նուիրական եռանդուն աշխատանքները։

Այսօր, այս աղէտալից օրերին, նա միակ հաստատութիւնն է, որ իբրև դասակարգ հրապարակ եկաւ և իր ու իրեն յարգողների ոյժի վրայ վստահացած՝ յանձն առաւ այն մեծ գործը, որ կոչուում է փախստական երեխաների ուսում ու կրթութիւն։

Երկու տարի է, Միութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած Ուսուցչական կոմիտէն, իր ոյժերը չի խնայում բարձր պահելու այն վստահութիւնը, որ նա ստացաւ Թիֆլիսի հայ ուսուցչական ընդհանուր ժողովից յանուն վերոյիշեալ նպատակից ընկերութիւնների իրականացման։

Այս ամենը, սակայն, մասնաւոր միջոցով քաջ յայտնի է ընթերցող հասարակութեանը։ Աւելորդ ենք համարում երկրորդելու։ Սրանով միայն գալիս ենք հայ հասարակութեան ուշադրութիւնը դարձնելու այսօրուան գրական-գեղարուեստական շքեղ երեկոյթի վրայ, որի նպատակը մեզ պէտք է ստիպէ խտանել ժողովարանի դահլիճի շրջերը մեր ունկնդրութեամբ և ներկայութեամբ։

Նեկ-Տար

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Սեւաստոպոլից հեղինակաւոր աղբիւրներից հաղորդում են, որ ռուսաց զօրքերի յառաջխաղացումը Սև-ծովի եղերքի շրջանում, նաւատորմղի եռանդուն աջակցութեամբ, ծաւալւում է կատարեալ աջողութեամբ։ Թիւրքական ձախ թեւը նահանջ է տալիս դէպի արևմուտք։ Բնակչութիւնը նաւակներով փախչում է դէպի Տրապիզոն։

— „Daily Mail"-ը հաղորդում է, որ ֆրանսիական նաւերը ռմբակոծել են Զմիւռնիան։

— Բուխարեստից հեռագրում են, որ բնակչութեանը հանգստացնելու համար, Բուքովինայի վարչութիւնը, որ փախել էր Դորնովատրա, վերադարձել է Չերնովից։ Միաժամանակ Չերնովից վրայ երևացել են ռուսական օդանաւեր, որոնք պանիկա են դցել քաղաքի բնակչութեան մէջ։

— ԱԹԷՆՔից ստացուած տեղեկութիւնների համաձայն, գերմանացիներն ու բոլգարները մտահոգութեան մէջ են այն բանից, որ Սալոնիկում դաշնակիցները խոշոր ոյժեր և մեծ թւով ծանր թնդանօթներ են ափ հանել։ Նրանք վճռել են փութացնել յարձակումը։

— Գերմանական աղբիւրներից հաղորդում են, որ իտալացիները մեծ ոյժեր են ուղարկում Սալոնիկ։

— Աւստրո - գերմանացիները նորոգել են երկաթուղու Գևգելի-Սարուսիցա գիծը։ Դաշնակիցները միջոցներ են ձեռք առել գրաւելու համար Սալոնիկի ամբողջ շրջակայքը մինչև Բոլգարիայի սահմանը։ Ցոյն բնակչութեանն առաջարկուած է ժամանակաւորապէս հեռանալ գրաւած վայրերից։

— Հաղորդում են, որ գեն. Մակենզենի և գերմանական շտաբի միջև թիւրիմացութիւններ են ծագել Սալոնիկի դէմ լինելիք արշաւանքը դանդաղելու առթիւ։ Մակենզենը յայտարարել է, որ գործը նորից ձգձգելու դէպքում ինքը չի կարող պատասխանատու լինել հետևանքների համար։

— Կորֆուից ԱԹԷՆՔ վերադարձած սերբիական արտաքին գործերի մինիստրը լրագրողներին յայտնել է, որ, չնայելով անաջողութեանը, սերբիական կառավարութիւնը հաւատում է վերջնական յաղթութեանը։ Հաշտութիւնը կը կնքւի միայն այն ժամանակ, երբ բաւարարուի մանր պետութիւնների անկախութեան սկզբունքը։

— Գերմանացիները տեղեկան են արել Բելգիայի սահմանի վրայ գտնուած մի քանի տեղերի բնակիչներին։ Այդ բնակչութիւնը պահուած է. իսկ Բելգիայում կանանց և երեխաներին թոյլ է տրուած հեռանալ Հոլլանդիա։

— «Jour. der Balcans»-ը հաղորդում է, որ բոլգարները ոչընչացրել են Սարուսայի վրայ գրաւուած բոլոր կամուրջները, վախենալով, որ դաշնակիցները շուտով կարող են արշաւել Սալոնիկից։

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացել ենք.

Աշտարակից մի խումբ երիտասարդների աշակցութեամբ «Աւետիս» ման գալուց 156 ռ. 91 կ.

Նուիրատուներն են.

Գ. Փարսանեան և Յ. Վարդապետեան 10-ական ռ., Յ. Գրիգորեան 5 ռ., Ա. Բոյախչեան, Գ. Շահ-Ազիզեան, Թ. Շահ-Ազիզեան, Ե. Ազատեան, օր. Նւարդ II որբանոց 3-ական ռ., Ն. Մովսէսեան, Յ. Սաղաթէլեան, Գ. Թումանեան, Վ. Շահ-Ազիզեան, Հ. Շահ-Ազիզեան, Ս. Սուքիասեան, պ. Խաչեկտորը, Գ. Ղափանցեան, Ս. Փարսանեան, Յ. Փիլոմեան, Ն. Մելքումեան, Ս. Վարդապետեան 2-ական ռ., Թ. Գասպարեան և Կ. Ղոնաղչեան 1 ռ. 50 կ., Մ. Նալբանդեան 1 ռ. 20 կ., օր. Գասպենցայ 1 ռ. 15 կ., Գ. Բաֆիլեան, Յ. Առաքելեան, Վ. Շահ-Ազիզեան, Կ. Ոսկանեան, Կ. Վիրաբեան, Ա. Ազատեան, Ա. Մակարեան, Հ. Գեորգեան, Ե. Մակարեան, Գ. Առաքելեան, Ս. Տէր-Սիմոնեան, Յ. Վարդապետեան, Թ. Տէր-Մկրտչեան, Գ. Շահ-Ազիզեան, Ս. Նուխեան, Ա. Մակարեան, Գ. Աղաբաբեան, Ս. Քումանեան, Ա. Անքանեան, Գ. Ղուկա-

digitised by A.R.A.R.@

սեան, Գ. Ազատեան, Կ. Արիստակէսեան, պ. պրիս. Առաքելեան, Գ. Ոսկանեան, Ա. Մնացականեան, Մ. Ղուշչեան, Ա. Իսպիրեան, Ս. Աւետիսեան, Ա. Շահ-Ազիզեան, Ա. Ազամիրեան, Վ. Այվազեան, Գ. Բաղդասարեան, Ե. Արամեան, Լ. Մուսէսեան, Ա. Աւագեան, Ա. Մուսէսեան, Գ. Փագեան, Վ. Տէր-Յովսէփեան, Ա. Շահ-Ազիզեան, Թ. Մուսէսեան, Գ. Մուսէսեան, Յ. Տէր-Յովհաննիսեան, Կ. Տէր-Յովհաննիսեան, Մ. Թաւադեան, Ա. Մակարեան, Մ. Շահ-Ազիզեան, Մ. Սիմոնեան, Ա. Տէր-Յակոբեան, Տ. Մկրտիչ Սիմոնեան, Թ. Մելքումեան, Շ. Բալասանեան, Մ. Շահ-Ազիզեան, Թ. Ազամիրեան, Ե. Արամեան, Ա. Նահապետեան, Լ. Նահապետեան, Գ. Շամիրեան, Գ. Ազաբաբեան, Թ. Զալբեան, Փ. Դաւիթեան, Թ. Գրիգորեան, Բ. Գրիգորեան, օր. Արփենիկ I որբ., Մ. Արիստակէսեան, Ս. Ղուշչեան, Յ. Փիլուզեան, Կ. Թումանեան, Կ. Զաքարեան, Թ. Բունիաթեան, Հ. Սուասնեան, Մ. Շարոյեան, Գ. Սիմոնեան 1-ական ռ., Ա. Ճանջաղանեան և Զ. Քիքիրջանեան 60-ական կ., Գ. Վիրաբեան, Յ. Ազամիրեան, Գ. Բաղդասարեան, Գ. Ղազարեան, Ս. Ղափանցեան, Բ. Թաւադեան, Փ. Կարապետեան, Ա. Ճինգիրեան, Բ. Մկրտչեան, Գ. Սուքիասեան, Կ. Ղուշչեան, Բ. Ղուշչեան, Ս. Տէր-Սիմոնեան, Տ. Անթանեան, Մ. Տանուտէրեան, Կ. Ճանջաղանեան, Ա. Ազիզեան, Ա. Ազատեան, Ա. Ամասեան, Հ. Թումանեան, Ս. Աւագեան 50-ական ռ., Կ. Կարինեան 41 կ., Գ. պ. Շահ-Ազիզեան, Վ. Բիձէն, Ա. Կարապետեան 40-ական կ., Փ. Павловичъ 25 կ.։

Ալէքսանդրապոլի Փոքր-Գարնի գիւղից Խաչատուր Պետրոսեանի և Արշակ Տէր-Մովսիսեանի օգնութեամբ գպրոցի IV և V բաժանմունքների սաներից կազմակերպած երգեցիկ խմբի «Աւետիս» ման գալուց 32 ռ. 93 կ.։

Նուիրատուներն են.

Խաչատրեան Հ. 3 ռ., Սպառողական «ընկերութիւն» 2 ռ., Ս. Սարգսեան, Տէր-Մովսիսեան Գ., Տէր-Առաքելեան Ե., Մնացականեան Տ., Խաչատրեան Յ., Մեժլումեան Գ., Վարդանեան Մ., Սարգսեան Մ., Յովհաննէսեան Ս., Պողոսեան Գ., Սարգսեան Զ., Տէր-Պետրոսեան Կ., Անտոնեան Մ., Սարգսեան Ն., Բաբեղեան Վ. 1-ական ռ., Թ. Պետրոսեան 1 ռ. 60 կ., Անդրէասեան Ս. 70 կ., Եղիշեան Կ. 68 կ., Տէր-Յարութիւնեան Մ. 65 կ., Զաքարեան Վ., Գրիգորեան Յ., Եղիշեան Պ., Տէր-Գրիգորեան Զ. 60-ական կ., Մովսիսեան Բ. 55 կ., Տէր-Առաքելեան Կ., Մանուկեան Կ., Տէր-Յարութիւնեան Կ., Թորոյեան Մ., Ալէքսանեան Ս., Բաբեղեան Պ., Յարութիւնեան Թ., Ասլանեան Յ., Մակարեան Գ., Մատոյեան Վ. 50-ական կոպ., Գալոյեան Ա. 45 կ., Դանիելեան Կ., Յարութիւնեան Մ. 40-ական կ., Խաչատրեան Տ., Եղիշեան Զ. 25-ական կ., Եղիշեան Մ. 20 կ.։

Խիւայի հայ կալոնիայի դեկտեմբեր ամսավճարները 131 ռ.։

Նուիրատուներն են.

Եղբայրք Սաֆարեանցներ 25 ռ., Յ. Յարութիւնեան, Հ. Յարութիւնեան 5-ական ռ., Ն. Յարութիւնեան, Ռ. Առուշանեան 3-ական ռ., Մ. Հայրիեանց, տիկ. Մ. Հայրիեանց 1-ական ռ., Թ. Մուսայիլեան, Մ. Յակոբեան 3-ական ռ., Գ. Բալայեան, Ա. Անդրիասեան, Ա. Յարութիւնեան, Ա. Խուդավերդի օղլուց 2-ական ռ., Ե. Ղարաբէկեան, Ա. Արզումանեան, Մ. Յարութիւնեան 1-ական ռ., Ա. Մարգարեան, Գ. Ղառուշեան 10 ական ռ., Ի. Բաբայեան, Աբշ. Արզումանեան 5-ական ռ., Մ. Ղազարեան, Ա. Յարութիւնեան, Ի. Ստեփանեան 3-ական ռ., Յ. Յարութիւնեան 2 ռ., Գ. Բախտամեան 6 ռ., Ա. Տէր-Գրիգորեան 4 ռ., Յ. Ստեփանեան 20 ռուբ.։

Դաշաւուղի հայ գաղութից 55 ռուբլի։

Նուիրատուներն են.

Դ. Սարգիսեան 10 ռ., Ե. Սաֆարեան, Ա. Պողոսեան, Ա. Բաբամեան 8 ական ռ., Թ. Աբրահամեան 6 ռ., Յ. Սաֆարեան, Ե. Յարութիւնեան 5-ական ռ., Գ. Յարութիւնեան 3 որ., Մ. Գիւլնազարեան 2 ռ.։

Սուխումի Լաթա գիւղից ծննդեան տօների նախաձեռնութեամբ հաւաքուած 50 ռուբլի Նշան Սուսերեանի միջոցով։

Նուիրատուներն են.

Փ. Քէշիշեան 5 ռ., Կ. Աթաբեկեան, Գ. Աթաբեկեան, Գ. Աթաբեկեան 3-ական ռ., Կ. Աթաբեկեան, Ս. Նահապետեան, Պ. Կոռաջելից, Օ. Կէօլէմէնեան, Յ. Մելքոնեան 2-ական ռ., Գ. Աթաբեկեան, Փ. Աթաբեկեան, Վ. Մելքոնեան, Յ. Նահապետեան, Գ. Աւճեան, Կոթուր, Յ. Աւճեան, Ս. Մելքոնեան, Կ. Քէշիշեան, Ե. Կանանդեան, Գ. Մելքոնեան, Յ. Զաքրեան, Կ. Զաքրեան 1-ական ռ., Յ. Թօփխարեան 1 ռ. 50 կ., Հ. Թէրզեան, Յ. Զաքրեան, Ս. Նահապետեան, Մարիամ Միւսելիմով, Ա. Մարգարեան, Ս. Մելքոնեան, Ա. Մելքոնեան 59 ական կ., Գ. Մելքոնեան 55 կ. և մի քանի անձնաւորութիւններից 7 ռ. 45 կ.։

Նոր ստացել ենք 425 ռ. 84 կ., մեզ մօտ կար առ 1-ն յունուարի 1916 թ. 11,905 ռբ., ընդամենը մեզ մօտ կայ 12,330 ռ. 94 կ.։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԿՈՉ

Թիֆլիս, 4 փետրուարի

Էրզրումի բերկրարիթ գրաւման առիթով Հայրենակցական Միութեան Վարչութիւնը որոշել է իր միջից ներկայացուցիչներ ուղարկել Էրզրումի և շրջանի մասին տեղեկութիւններ հաւաքելու և անմիջական օգնութիւն հասցնելու համար։

Այս նպատակով կոչ է անում հայ հասարակութեանը ընդհանրապէս և պանդուխտ Էրզրումցիներին մասնաւորապէս՝ առատ նուէրներով հրատապ օգնութեան հասնել հայրենիքի բեկորներին։

Նուէրները խնդրում ենք ուղարկել Միութեանս գանձապահ պ. Յարութիւն Մաբեանին, Մանթաշեանի պասաժում։

Տաճկահայերի Հայրենակցական Միութեան Վարչութեան փ.-նախագահ՝ Գ. Դարակիլեան

ՊՈՍՏԱՐԿՂ

ԽԱՐԿՈՎ. Մ. Եանօղլանին.—Ձեր ուղած համարներից շատերը սպառած են. կարող ենք ուղարկել Ռեցածը տարեկան բաժնեգնի հաշուով։

Խմբագիր՝

Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԱՇԻՒ

Մուտքի և ծախքի Աշտարակի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի, յընթացս 1915 թուի։

ՄՈՒՏՔ	Ռ.—Կ.
Հանգանակած է Աշտարակի գիւղից	160—48
«Աւետիս» ման գալու եկամուտ	130—06
Յունուարի 17-ին ստացուել է Երևանի Եղբ. Օգ. Յանձ.-ից	200 —
Փետրուարի 12-ին ստացուել է Էջմիածնի Գլխ. Կրգ. Յնձ-ց	400 —
Մարտի 8-ին » » »	400 —
» 16-ին » » »	148 —
» 21-ին » » »	293 —
Ապրիլի 27-ին » » »	300 —
Մայիսին պ. Գարեգին Ամիրեանից նուէր	1 —
» 26-ին Էջմ. Գլ. Կրգ. Յնձ-ց	742 —
Յուլ. 3-ին » » » »	400 —
» 23-ին » » » »	600 —
» 28-ին » » » »	600 —
Օգոս. 5-ին » » » »	600 —
» 7-ին » » » »	500 —
» 14-ին » » » »	1000 —
» 21-ին » » » »	2150 —
Սեպ. 15-ին » » » »	800 —
Նոյեմ. 6-ին » » » »	447—02
Գումարը	9871—56
Յանձնաժողովը պարտք ունի	9—20
Գումարը	9880—76

ԾԱԽՔ	Ռ.—Կ.
Գնուած է ցորեն և բաժանուած գաղթականներին 822 փ. 13 ֆ. վճարուած է	1359—69
Գնուած է հաց Քէ շրջանի և Քէ անցնող գաղթականների համար 1991փ. և վճարուած է	4778—39
Գնուած է վառելափայտ և բաժանուած	624—48
Փախստականների անասունների համար կեր է գնուած	370—88
Բաժանուած է սապոն արժողութեամբ	36—75
Զանազան ծախք, իւղի, բրնձի, ձէի և այլն	341—72
Փախստականներին շրջանները տեղափոխութ. վարձ	1305 —
Դեղերի և ծաղկի պատասխանի ծախք	50—07
Բժիշկների գիւղերը շրջելու, ձիերի, կառքի, բնակարանի վարձ և սանիտարի ռոճիկ	106—86
Հիւանդներին կաթի, ձէի, գինու վճարուած է	43—95
Էջմիածնից ալիւր, հագուստ և այլ մթերքների տեղափոխութեան	114—20
Գնուած է միս ճաշարանի համար 1446 փ.	173—38
Փախստականների իշխանները մաքրող մշակների և խոհանոցի ծառայողների վարձ վճարուած է	84—40
250 հոգու մեռելի պատանացու է գնուած	193—88
Գերեզման փորողների վճարուած է	157—50
Զանազան ծախքեր	79—91
Յանձնաժողովի անդամների ճանապարհի և գրասենեակի ծախք	59—50
Գումարը	9880—76

Աշտարակի Եղբ. Օգն. Յանձնաժողովի Նախագահ՝

Յովհաննէս Քարաւանեան

131 1—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՐԴ!

ԴՈՒ ՓԱՌՔ ԵՍ ՈՐՈՆՈՒՄ, ԲԱՅՑ ՉԵՍ ՀԱՍՆՈՒՄ ՆՐԱՆ.

Մէկը՝ առանց կոպէկի մեծ գործ է սկսում և առաջ գնում. միւսը նախանձում է նրան, իր ծննդեան օրն ու ժամը անիծում, ճակատագրից գանգատւում։ Այն ինչ՝ բաղդը, ճակատագիրը դեր չունեն այդտեղ։

Շատերը կան, որ դեռ չեն ըմբռնում իրենց անպիտանութիւնների իսկական պատճառները, չգիտեն, որ դրանք թաղնուած են քայքայած օրգանիզմի և ջղային հիւանդութիւնների մէջ։ Ջղային հիւանդութիւնը գլխաւորապէս առաջ է գալիս գլխի ուղեղի և ողնաշարի անկանոնութիւնից և հիւթի ու ֆոսֆորի շատ կորցնելուց։

Ջղային հիւանդութիւնները զանազան տեսակի են. օր. գլխացաւ, ցընցումներ, մէջքի, ողնաշարի, երեսի, կոկորդի, ոտքի, ձեռքի ոսկորների ցաւ, անքնութիւն, ծանր երազներ, երբեմն աչքերի խաւարում, դող, անհանգստութիւն, օրգանական թուլութիւն, մոռացկոտութիւն, վախ, արբեցողութիւն, բարկացկոտութիւն, նիհարութիւն և այլն։

Դրանց բուժելու երկու ճանապարհ կայ. 1) Անպայման հանգստութիւն, մտաւոր և ֆիզիքական աշխատանքներից առ ժամանակ խուսափել,—մի բան, որ դժուար է ներկայ ջղային դարում, երբ ամեն վայրկեան ցնցող դէպքերն են յաջորդում միմեանց։

Մնում է երկրորդ միջոցը՝ սննդարար հիւթեր ընդունելը։ Իսկ այժմ ամենալաւ հիւթը ՖՈՍՖՈՐՆ է։

Գարիզի յայտնի բժիշկ Գիէզին երկար աշխատանքից և փորձերից յետոյ աջողուել է պատրաստել միակ դեղը, որը պարունակում է իր մէջ մեծ քանակութեամբ ֆոսֆոր. այդ դեղը կոչւում է Ստիմուլոլ, որը վերականգնում է կորցրած երիտասարդութիւնը, առողջութիւնը և ընդհանուր ջղայնութիւնը և թուլութիւնը. արտասահմանի և Ռուսաստանի յայտնի պրոֆեսորները, բժիշկները և հիւանդները տուել են իրենց գովասանքը և շնորհակալութիւնը և այժմ զանազան սանատորիաներում և հիւանդանոցներում բժշկում են հիւանդներին Գարիզի յայտնի բժիշկ Գիէզի հանճարեղ դեղով՝ Ստիմուլոլով... Ահա ինչ են գրում Ստիմուլոլի բժշկութեան մասին բժիշկները.

Յարգելի բժիշկ։ Ուրախութեամբ յայտնում եմ, որ Ստիմուլոլ պրեպարատը տալիս է զարմանալի արդիւնք։ Ստիմուլոլ պրեպարատը հանճարեղ գիւտ է. նա ընդունելու համար շատ գեղեցիկ կերպով բաժանուած է և ամբողջ արտով աջողութիւն եմ ցանկանում նրան։

Իմ հիւանդների սեռական ջղայնութեան ամենածանր դէպքերը ես բուժելու եմ Ստիմուլոլով։ Հիւանդութեան թեթև դէպքերում Ստիմուլոլի ազդեցութիւնը նկատում է 2—3 շաբաթից յետոյ, իսկ ջղային հիւանդութիւնների դժուար դէպքերում՝ 3—4 շաբաթից յետոյ։

Աչքի առաջ ունենալով պրեպարատի կատարելագործութիւնը մի քանի դէպքերում, ես այն յանձնարարել եմ հիւանդին նոյն իսկ ոչ նրա ներկայութեամբ, ցոյց տալով նրան դեղատոմսից օգտուելու հեշտ ձևը։

Սեռական անկարողութեամբ բռնուած հիւանդները Ստիմուլոլով աջողութեամբ կարող են օգտուել առանց բժշկի դեղատոմսի, որ առանձնապէս ձեռնտու է, աչքի առաջ ունենալով այն կեղծ ամօթխածութիւնը, որ ըզգում են հիւանդները։

Սեղմում եմ Ձեր ձեռքը՝ պրոֆ. Մ. Լեզուար։

Իսկական Ստիմուլոլը պատրաստւում է Ֆրանսիայում (Գարիզում), ամեն մի արկղն ունի գործարանի դրոշմը՝ Institut „Dr Calvet Paris". մի տուփը բաւական է, որ դուք զգաք նրա հրաշալի գործողութիւնը եւ դուք կը սաստնամ ձեր ուրախութիւնը եւ առողջութիւնը. դեղերի հետ ուղարկւում է բոլոր եւրոպական և Ռուսաստանի պրոֆեսորների, բժիշկների, հիւանդների գովասանքները և շնորհակալական նամակները։

Պատուէրները, փողը և նամակները ուղարկել 1) Тифлисское отдѣленіе Института доктора Кальве. Тифлисъ, Эриванск. площ. Пушкинская, 3, верхній этажъ, отд. 9/2 (Խնդրեմ հասցէն գրել լրիւ, ինչպէս որ ասերէն գրուած է)։ Մէկ տուփն արժէ 7 ռուբ., ճանապարհածախսով և վերադիր վճարով, 50 կոպ. աւելի արժէ։ Ով ուղարկի 7 ռ. փողը առաջուց լիովին, ճանապարհածախս չի վճարում, իսկ 4 տուփն արժէ 25 ռ.։

Վերադիր վճարով ուղարկում է միայն 2 ռ. 50 կ. կանխավճար ստանալուց յետոյ։ 884 0—4

Երիտասարդ մը

կը փափագի Ֆրանսերէնի դասեր տալ, խիստ ժամչելի գներով։

Փափագողք թող դիմեն հետեւեալ հասցէով՝ Гор. Карсъ, А. Екавянцу, Александровская ул. 129 3—2

ԶԻԼԲԵՐՇԱՑ-ՇԱՊԵԼՆԻԿՈՎԱՑԻ

Ոլխաւոր-Ինկայա փողոց, № 7. Բ.-Մանդի հիմաց, Վարոնցովի արձանի մօտ։ Ընդունում են մասնագէտ բժիշկները, առաւ. ժ. 8-ից—երեկ. 8 ժամը։ Կարելի է բժշկել ըստ ցանկութեան առանց բար-մասիճայի և ստամենները հանել առանց ցաւի, Քմրեցուցիչ գեղերի ներգործութեամբ։

Առաջարկուածներն ունի արհեստանոց, որտեղ ընդունում են պատուէրներ ամեն տեսակի արհեստական ատամ. համար. պատուէրները կատարում են շուտ։ Արհեստական ատամները սկսած 1 ռ. 50 կոպէկից և վեր։

24 25—20

Նորին Ս. Օծութիւն

Ազգիս Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ Գէորգեան Հոգևոր Ճեմարանի Վարչութիւնը յայտնում է գիտութիւն Ճեմարանի աշակերտների և ուսանողների, որ ներկայ ուսումնական տարում, համաձայն բժշկական խորհրդի եզրակացութեան, Ճեմարանում զորոցական պարապմունքներ չեն լինելու՝ Վաղարշապատում և շրջակայքում ԲՇԱՀՈՐ ՏԻՖԻ խիստ ծաւալման և գարնանը նորանոր սուր վարակիչ հիւանդութիւններ առաջանալու հնարաւորութեան պատճառներով։

892 2—1 Վարչութիւն Ճեմարանի

Կը փնտռի

Վանի, Հայոց-Ձոր գաւառի, Անգղ գիւղացի Թագուհի Եղիազարեան, որ յուլիսեան մեծ գաղթին կորած է գաղթած և սակայն ուր ըլլալը յայտնի չէ։ Կը խնդրուի բոլոր բարեկամներից և ծանօթներից, որոնք գիտեն յիշեալին ուր ըլլալը, բարի ըլլան իմացնել իր ամուսին Խաչատուր Պատուրեանին հետեւեալ հասցէով՝ Тифлисъ, Шемахинская ул. № 14, Николаю Егіазаряну. 126 7—2

Վանի

մեծ գաղթին, Գիրգիսի Թիզան գաւառի Ս. Խաչ գիւղացի, եղբայրս Նշան, կինը Ոսկոամսուսինս Կաքվօ, քոյրերս Աղասօ և Ամօ, նաև կարկառ գաւառի Եղիգիս գիւղացի Ալլահվերդեան Արշակ, եղբայր Ալլահվերդի, իրենց մայրը Սուլթան, կորած են։ Կը խնդրեմ ասոնց մասին տեղեկութիւն ունեցողներին բարի լինին յայտնել ինձ հետեւեալ հասցէով. Макѣевка, О. В. Д. Араму Аматуняну.

130 3—2 Սիմոն Յակոբեան

Մի քանի օր առաջ

փոքրմէնիս հետ միասին կորսնցուցի արժեթուղթ մը Crédite Foncier Egiptien *թիւն է 699868 և լուսանցքին վրայ գրած կայ հայերէնով Մարիամ Սրապեան։ Գտնողքերէ և լուսայափոխներէ կը խնդրուի ուշադրութիւն դարձնել և գտնելու դէպքում յայտնել ինձ «Հորիզոնի» խմբագրութեան հասցէով։*

ԶԱ. 3—2 Յովհաննէս Թոփուզեան

Կը փնտռի

Վանի 30-օրեայ կռիւների հերոս և նահատակ Եղիա Նախշունեանի մանչ զաւակը Հայկ, 4 տարեկան, որին Վանից գաղթելու ժամանակ մի ձիաւոր օֆիցեր վերցնում է, խոստանալով, հասցնել Ղզլղիզայի շտաբը. վերջինում հարցնելով, երեխան չն գտնում, երեխան չէ գտնում։ Երեխայի նշանները. Գլուխը բիչ մը մեծ, փոքր աչքեր, մէջքը լայն, թուխամորթ. երեխայի մօտ եթէ Ազնիւ, Հռիփ, Սեպուհ անունները տան, կարտայայտուի։ Տեղը գիտցողներից կը խնդրուի յայտնել։ Кизляръ, Т/об. А. Іоаннисяну, յանձնել պ. Արսէն։ 120 4—3

КАТАРРЪ ЖЕЛУДКА
ГЕМОРРОЙ
ЗАПОРЪ
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО, ИСКЛЮЧИТЕЛЬНО
ПИЛЮЛИ „КАТАГЕМО"
М. ДЕЛАМУРЕ.
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3, ВЕРХНІЙ ЭТАЖЪ.
809 40—21

ՆՈՐ ՄԻԶՈՑ
ԲՈՐՈ-ՆԱՖԹԱԼԱՆ
Բոլորովին ոչնչացնում է գլխի բիծը, ամրացնում է մազերը, օգնում է նրանց բուսնելուն, տալիս է մազերին բնական եւ ամուր տեսք եւ կարում է գլխի քարը։
Թոյլատրուած է բժշկական վարչութիւնից, որպէս ֆետակար նիւթեր չպարունակող մի միջոց։
Գտնւում է Կովկասեան Ընկերութեան դեղատներում, նրա բաժանմունքներում, Բաքու, Բաթում և Ռուսաստանի բոլոր դեղատներում։
1033 10—9

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ
ԼՈՄԲԱՐԴԸ
յայտարարում է ի գիտութիւն ընդհանուրի, որ պայմանաժամ չանցած վաճառող գրաւների մեծ քանակութեամբ լինելու պատճառով, ԱՅՍՈՒՐԴՆԵՐՆ այսուհետև մինչև ցնոր կարգադրութիւն տեղի կունենան ամեն կիրակի օրերը, առաւօտեան 10 ժամից Լոմբարդի շինութեան մէջ—Օլգինսկայա փող. № 3։ Այդ հասարակական վաճառքների ժամանակ վաճառման կենթարկուեն նաև պայմանաժամն անցած գրաւները, որոնք բաղկացած են թանկագին մետաղներից ու քարերից, մետաղեայ առարկաներից, կարի, գրելու, գործելու մեքենաներից, պարսկական ու տէկինսկի բրդեայ ու մետաքսեայ մեծամեծ նաներից, պարսկական ու տէկինսկի բրդեայ ու մետաքսեայ մեծամեծ նաներից, գրեստներից և առհասարակ այլ և այլ իրերից ու նիւթերից։
Վարձելով նոր, միանգամայն չոր, հսկայական պահեստատեղիներ, Լոմբարդը ի պահ է վերցնում ամեն տեսակի իրեր։
Շրջանառութեան շատ մեծանալու շնորհիւ Լոմբարդը տեղական ժամանակ լոմբարդներում և փոխառութիւն տուող գրաւանոցներում թափում է ամեն տեսակի գրաւներ և բերում իր մօտ, վճարելով ոչ միայն տոկոսները, այլ և շատ յաճախ տալով նաև յաւելեալ փոխառութիւն։
ԸՄԲԵՆ ՏԵՍԱԿԻ ԻՐԵՐԻ ՀԱՄԱՐ փոխառութիւն տրւում է անսահման քանակութեամբ տարեկան 11%-ով։
891 0—1

ԱՌԱՋԻՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԻՋՈՑ
ԿԱՊՍԻԻԼՆԵՐ
„ԳՈՆՈՋԱՆ"
ՏՐԻՊՊԵՐԻ
(ԳՈՆՈՐԲԷՅ)
ԴԷՄ.
Փորձուած են Թիֆլիսի, Ռուսաստանի և արտասահմանի բոլոր բժիշկների և պրոֆեսորների կողմից
ԵՒ ՃԱՆԱՉԻՍՏ ԵՆ ՈՐՊԷՍ ԱՄԵՆԱԼԱՒ ՄԻՋՈՑ,
ՏՐԻՊՊԵՐԻ բուժման գործում։
Նամակներով և պատուէրներով խնդրում ենք դիմել բացառապէս
Р. Шмидтъ, Тифлисъ, Давидовская, 36/о.
Ռ. ՇՄԻԴՏ, Թիֆլիս, Դաւիդովսկի, 36/о.
Ուղարկւում է նաև օտարաքաղաքացիներին 2 ռ. կանխավճար ստանալուց յետոյ։

Զկայ հիանդութիւն աւելի տարածուած և աւելի տեսակ իր հետեւանքներով և բարդութիւններով, որպէս ՏՐԻՊՊԵՐԸ (գոնորբէյ)։ Վերջերս բժիշկները աշխատեցին գտնել այնպիսի մէջոց, որը ազդեց անմիջապէս գոնորբէյ հիւանդութիւնը առաջացնող պատճառների դէմ։ Բրուկը և Լեսերը գտան մի տեսակ աղ, արծաթ, ալբարին և ուրանորլին, որոնք որոշ ստիճան աշխատեցնում են գոնորբէյի հիւանդութեան զրգռողները։ Բայց դեռ բոլոր հետազօտողները եկան այն եզրակացութեան, որ ՏՐԻՊՊԵՐԻ ապաքինման համար անհրաժեշտ է ոչ միայն արտաքին, այլ և ներքին բուժում։ Սանտալի իւղը վաղուց յայտնի է եղել, որպէս ամենալաւ միջոց, բայց դժբախտաբար նա կեղծուած է և ներկայումս գտնել շատ դժուար է. այդ պատճառով յայտնի պրոֆեսորներ՝ Լեսներ, Բրուկ, Ցէյդել, Ֆինգեր, Զելենն յանձնարարում են «Գոնոզան» կապսիլները, որպէս ամենալաւ ներքին միջոց տրիպպերի դէմ, որը արագութեամբ բժշկում է ամենահին տրիպպերն անգամ։
Հարցրէք ինչ բժկի ուզում եք «Գոնոզան» կապսիլների մասին, եւ նա ձեզ կը յանձնարարէ որպէս ամենաարմատական միջոց։ Այս միջոցը յանձնարարելի է թէ տղամարդկանց եւ թէ կանանց։
890 5—2

Հրատարակութիւն «Հոյս» Ընկերութեան Дозв. воен. цен. Типографія „МАМУЛЪ", Лорисъ-Меликовская ул., д. 22

digitised by A.R.A.R.@